




796

1898

1898
8/10



LIBRARY
MUSEUM
OF THE
SMITHSONIAN INSTITUTION
WASHINGTON, D. C.

101

ԽԱԹԱԲԱԼԱ

ԿՈՄԵՏԻԱ

Առաջին անգամ ներկայացրած է Թիֆլիզի շառաչային լապրանոս՝ 1866
Ապրիլի 7-ին երկու արարումով, 1867 Յունիսի 12-ին երեք արարում-
ով և 1879 Նոյեմբերի 22-ին չորս արարումով:

AP1
U-94

881.33
U-9498

1/4

ԽԱԹԱԲԱԼԱ

ԿՕՄԵԴԻԱ ԶՈՐՍ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ԵՒ

ՎԵՑ ՊԱՏԿԵՐՈՎ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ

ՀԵՂ

Архивное Управление
№ Д. Арм. ООП
НАУЧНО-СПРАВОЧНОЕ
БЮРО

ԹԻՖԼԻՉ

ՏՊԱՐԱՆ ԶՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ

ՕՐԻՆՆԵՆ ՓՈՂՈՑ, Ե

1881

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՈՒԿՆԵՐԻ ԿՈՒՐՍՆԵՐԻ ԿՈՒՐՍՆԵՐԻ

796 ԿԶ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԻՋՐԴԱՏ ԱՄԵՐԻԿԵԱՆԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՆՈՒԷՐ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ



(593-2004)

609-2013

Дозволено Цензурою. Тифлисъ, 12 Іюня 1881 г.
Типографія И. Мартиросіанца, Орбеліан. ул., 5

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1866—1867

- ԳԱՐԱՍԻՄ ԵԱԿՈՒԼԻԶ ԶԱՄԲԱԽՈՎ, (200000) ՍՈՒՐՍԻՍ
 Հարուստ վաճառական. ՄԻՀՐԳԱՏ ԱՄԵՐԻԿԵԱՆ †
 ՄԱՐԳՐԻՏ, նորա նշանելու աղջիկը,
 տղեղ և կարճահասակ. ՕՐ. ԱՐԱՄԵԱՆՅ †
 ԻՍԱՅԻ, վաճառական, Զամբախովե ազ-
 դական. Պ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ
 ՆԱՏԱԼԻԱ, Իսայու կինը, ղեղեցիկ և
 բարձրահասակ Տ. ՄԷԼԻՔ-ՆԱԶՈՐԵԱՆՅ
 ԳԷՈՐԳ ՄԱՍԻՍԵԱՆՅ, աստիճանաւոր
 երիտասարդ. Պ. ՉՄՇԿԵԱՆ
 ԲԵԹԵԻԱՆ, Գէորգի մայրը, այլև կին. ՕՐ. ԱՐԱՄԵԱՆՅ †
 ԽԱՄՓԵՐԻ, Գէորգի մըրաբայրը. Տ. ՍԱԹԻՆԻԿ
 ՍԱՐԳԻՍ, Զամբախովե ծառայն. Պ. ԳԻՎԱՆԵԱՆՅ
 ԱՐՏԷՄ, Իսայու ծառայն, փոքրիկ տղայ. Պ. ՆԱՍԻՐԵԱՆՅ

Առաջին, երրորդ և չորրորդ արարուածները կատարվում են Զամբախովե տան առաջ և ամեն, իսկ երկրորդը՝ Մասիսանցի տանը:

Անցքը պատահում է Թիֆլիզում 1860-ին:

1879 թուի ներխույնողներն էին՝ Պ. ՇԱՆԵԱՆՅ, Տ. ՉԱՄԻՐՍՄ, Պ. ՍՈՒ-
 ԲԵՇԵԱՆ, Տ. ՍԱԹԻՆԻԿ-ՉՄՉԿԵԱՆ, Պ. ԼԵԼՅԵԱՆՅ, Տ. ՍԵՆՊՈՒՍՅ-ՇՆԵԱՆՅ,
 Տ. ՍԱԹԻՆԻԿ-ՉՄՉԿԵԱՆ, Պ. ՏԵՐ-ԳՆԻԹԵԱՆՅ և Ռ Ռ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՐԱԿՐՈՒԹԻՒՆԸ

ԳԱՐԱՍԻՄ (ԿԱՐԱՊԵՏ), 60 տարեկան, միջին Հասակով, պատկառելի դէմքով և բոլորովին սպիտակ մազերով: Երեսը ածեւած, չօնքերը Հաստ, բեխերը միջակ: Սև մահուդէ եւրոպական Հագուստ՝ երկայն ժիւէտ, փոքր ինչ լայն անդրավարտիք, երկար ու լայն սերժուկ, Հին ձևի մեծ դլխարի—Փութիկայ և մետաքսեայ սև լայն փողպատ: Փողոցում՝ ձեռքին կարճ Հաստ ձեռնափայտ, իսկ վրան գցած երկար ու լայն վերարկու—պալտո: Գործ է ածում արծաթեայ Հին ձևի Հաստ ժամացույց սև բարակ ժայպաէնով և կանաչագոյն մետաքսեայ ծաղկախառն թաշկինակ: Քայլը Հաստատ, ձայնը սղղու, շարժումը և խօսակցութեան ձևերը ծանր: Ըստ երևոյթին շատ պատուաւոր անձն:

ՄԱՐԳՐԻՏ, 19 տարեկան, տղեղ և կարճահասակ օրիորդ, ակդական վրաց Հագուստով, գլուխը վրացնակ զարդարում: Առաջի արարումում Հագնում է բաւականին Հասարակ և առանց դօտիկ. իսկ երրորդում և չորրորդում՝ ամենաշքեղ ձևով, գօտիով և զանազան ակննդեմներով զարդարում: Զայնը քաղցր, խօսակցութեան ձևերը և շարժումը Համեստ:

ԻՍԱՅԻ, 40 տարեկան, վայելուչ կազմուածքով և գեղեցիկ, բայց փոքր ինչ չիմար դէմքով: Երեսը ածեւած, մաղերը բոլորովին սև, չօնքերը բարակ, բեխերը միջակ: Թիֆլիզի վաճառականն ընտիր Հագուստ՝ մետաքսեայ սև արխալուխ, կուրծքը

կապած և բարակ սոկեթելով բոլորած, բարակ փողպատ, սև մահուդէ կաբայ, մոխրագոյն մետաքսեայ դօտի, մահուդէ բաց-շագանակագոյն լայն անդրավարտիք և դլխարի—փոքրիկ սև Փութիկայ: Գործ է ածում գեղին մետաքսեայ ծաղկախառն թաշկինակ: Շարժումը և խօսակցութեան ձևերը Հասարակ:

ՆԱՏԱԼԻՍ, 20 տարեկան, նուրբ կազմուածքով և կախարդիչ դէմքով: Հասակով Մարգրիտից շատ բարձր: Երկու ձեռք բուն վրաց գեղեցիկ Հագուստ՝ մինը առաջին արարումում, իսկ միւսը երրորդ և չորրորդ արարումներում, գլուխը վրացնակ զարդարում: Փողոցում՝ ձեռնոցներ, փոքրիկ Հովանոց և սպիտակ թեթև վերարկու: Շարժումը կենդանի, երգում է Հիանալի:

ԳԷՈՐԳ, 27 տարեկան, սև մազերով և թարմ գրուիչ դէմքով: Հագուստը բոլորովին եւրոպական, ամենարևտիր ճաշակ և գլխարկը միշտ սիլինդր: Փողոցում՝ կարճ պիջակ, գեղին ձեռնոցներ և բարակ ձեռնափայտ. տանը՝ սկզբում, մոխրագոյն բաճկունակ (ժակէտիկայ) կարմիր ժայպաէնով բոլորած, յետոյ, սև սերժուկ և Ֆրակ, ինչպէս նշանակուած է իր տեղը. գաւթումը՝ վերարկուով և ձեռնափայտով. իսկ Զամբախովի տանը՝ Ֆրակով և սպիտակ ձեռնոցներով, ինչպէս և Հագնում է երկրորդ արարումում վերջումը: Զայնն ախորժալի, խօսակցութեան ձևերը և շարժումը քաղաքակրթում:

ՔԵԹԵՒԱՆ, աչրի կին, 52 տարեկան, գեղեցիկ դէմքով, երեսը թուխ, չօնքերը սև: Վրաց Հագուստ, գլուխը վրացնակ զարդարում, Հասարակ չեքիւլայ, մուգ դալամբարէ ճակասի աղուխ առանց բորոցի, մետաքսեայ սև դլխի փաթաթման, մուգ մանիշակագոյն դօշ սև թաւիչէ ժայպաէնով բոլորած և Հասարակ քորոցով, մուգ միխակագոյն

մետաքսեայ դէրեայ և քերմանն շալէ սև դօտի:
Խօտակցութեան ճեւերը և շարժուածքը ծանր:
Ամենաբարի և ամենապատուելի անձն:

ԽԱՄՓՆԻԻ, 50 տարեկան. Հաճելի գէմքով ու սև բարակ
չօնքերով նիհար կին: Վրացեայ մետաքսեայ սև
Հապուտ կապոյտ ոտ ու գօտիով. գլուխը վրաց-
եան, Հասարակ չեքելայ, կապոյտ թաւիչէ ճա-
կատի աղլուխ և մուգ դլխի փաթածան: Գործ է
ածում սպիտակ դաթիբայ: Խօտակցութիւնը, ման-
գալը և շարժուածքը արագ և կրակոտ:

ՍԱՐԳԻՍ, 25 տարեկան: Առաջի արարուածում՝ չթէ ար-
խալուխ սև Հասարակ քամարով, իսկ երրորդում
և չորրորդում՝ սև մահուդէ չեքքեղեայ գեղն կա-
պիտօնէ բարակ դաչիթանով բոլորած և արծա-
թեայ շքեղ քամար: Միշտ առանց գլխարկի:

ԱՐՏԷՄ, 14 տարեկան տղայ, սպիտակ մահուդէ չեքքեղ-
կայով:

ՄԵՄԲԵՐՆԵՐ ԵՒ ԵՐԿՐՈՒՄ

ՏԵՍԵՐԵՆ ԵՒ ԵՐԿՐՈՒՄ

Տեսարանը ներկայացնում է Թիֆլիզի մէկ փողոց. աջ *) կողմը
կարագետ Զամբախովի երկու-յարկանի տունը դռնով և փոք-
րիկ պատշարմով: Ժամանակը կէսօրին մօտ է:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԳԷՈՐԳ, յեղոյ ՆԱՏԱԼԻԱ, ԱՐՏԷՄ

ԳԷՈՐԳ, մէնայ, չորս հոգի ունի և փոքրահասակ:

Այս էլ չէ... երևի ուղեղը չիմացայ... Ո՛ւշը
հարցնեմ... Զարմանալի փոփոխութիւն է ստացել
այս փողոցը: (Նստալիս Տիմոս է ուղ հոգիի և կորու-
սեալի ունի դուռը ծեծում է. Արսէնը հեռուում է նորան՝
չէտէն էրկար լեղի մէջ փակալուծ Տիմոսէղէն:) Ոչ ոք
էլ չկայ այս տեղ, որին մարդ գիմի և հարցնի.
Կարծես անապատ լինի: (Տեսնելով Նստալիսին:) Բայց

*) Աջ, չորս, պէտք է ընդունել Հանդիսականների գերեզնիս նա-
յելով:

ահա . . . կարելի է այս աղջիկն իմանայ . . . (Մտե- նայով նստող խոյն, քաղաքավարութեամբ ողջունում է նո- րան) : Ներեցէք խնդրեմ . . .

ՆԱՏԱԼԻԱ, վախճանով :

Ա՛խ :

ԳԷՈՐԳ

Մի՛ վախենաք խնդրեմ . . . կարելի է հրամանքդ իմանաք՝ Մարտիրոսեանցի տունը ո՞րն է այստեղ :

ՆԱՏԱԼԻԱ, շիրմա-ում :

Էս քուչու՞մը Մարտիրոսեանցի տունն չկայ :

Դուստր ծէծում է :

ԳԷՈՐԳ

Ինձ այստեղ ասացին :

ՆԱՏԱԼԻԱ, նայնդէն :

Չի՞մ գիղի, պարուն :

Դուստր սասորի՛ է ծէծում է :

ԳԷՈՐԳ

Ո՞ր կողմը հարցնեմ, չէ՞ք իմանում արդեօք :

ՆԱՏԱԼԻԱ, աւելի շիրմա-ում :

Ա՛խ Աստուձ, ասում իմ վուր չի՞մ գիղի . ի՞նչ իք կամենում ինձմէն :

Աւելի սասորի՛ է ծէծում դուստր :

ԳԷՈՐԳ, ողջունելով :

Ներողութիւն եմ խնդրում, ես ձեզ ներողութիւն պատճառեցի : (Մէջ մէկու ողջունում են . Գեորգը հե- տանում է և սասորի) : Այս ինչ գեղեցիկ արարած է . . . Ո՞վ պետք է լինի սա . . . Այ գեղեցկութիւն :

Նայելով կանաչան աների՛ դուստր է գնում չափ հողմից :

ՏԵՍԻԼԻՅ

ՆԱՏԱԼԻԱ, ԱՐՏԵՄ, դրան մտնելով յետոյ ՄԱՐԳՐԻՏ

դաստիարակով :

ՆԱՏԱԼԻԱ

Ինչ վախեցայ, քա՛ն : Աբա թէ՛ բաց անին :

Դուստր շարժում է :

ՄԱՐԳՐԻՏ, դուստր գալով դաստիարակ և այն պեղծից նայե- լով :

Քա՛ն, դո՛ւն իս, նստալիա ջան . ի՞նչ խէչէն է միտդ ինք էկի :

ՆԱՏԱԼԻԱ

Նա *) իմ, Մարքրիտ ջան, մէ՛ չուստ ասա՛ն բաց անին, թէ՛ չէ յօրէս սիրտս կէհայ :

ՄԱՐԳՐԻՏ, դաստիարակ :

Էս սահաթիս, գէնացվալէ . ի՞նչ է պատահի :

Շրտալով ներս է մտնում :

ՆԱՏԱԼԻԱ, սասորի :

Ինչքի էն կունձոն ժաժ դու քայ, իմն ինձ կու հասնի : (Դարչեալ դուստր ծէծում է) : Ա՛խ Աստուձ, բաց անին էլի :

*) Ե տառը մակաղէտով նշանակած (՛է) պետք է արուստա- նել խկ և խկ այնպէս, ինչպէս արտասանվում է չի վանկը բա- ւել միջում կամ միջում ձայնաւորից յետոյ, օրինակ՝ մա յիս, Գա յի անէ, Երկնա յիս, Նսա յի, և այլն : Տես և ծանօթութիւն ՊԵՊՈ կոմիդիայում :

ՏԵՍԻԼ Գ

ՆԱՏԱԼԻՍ, ՄԱՐԳՐԻՏ, ԱՐՏԵՄ, ՍԱՐԳԻՍ

ՄԱՐԳՐԻՏ, որոնք լուսնային դասերն են,

Ձիւ մէ չէկար, Նատալիա ջան . . . (Մէկ ձէլու համբարում են :) Ամա սիրտդ ուր է գնում. ի՞նչ է պատահի, գէթ աղվանէ : *)

ՆԱՏԱԼԻՍ, աղաս շնչելով :

Օ՛հ, հէնց գիդէի սիրտս կէհայ :

ՄԱՐԳՐԻՏ

Լիդէս պատովեցաւ, քա. ի՞նչ խաբար է :

ՆԱՏԱԼԻՍ

Էլ վունչինչ, Մարքրիա ջան, անց կացաւ : Մէ ջէհէլ Ֆրանտ տղայ վախեցրուց :

Սարգիսը եւ Արտեմը իրար հետ ցածր խոսում են :

ՄԱՐԳՐԻՏ

Վո՛ւյ քոռանամ նա, էտ վո՛ւնց :

ՆԱՏԱԼԻՍ

Վերիւր կօսիմ, Մարքրիա ջան : Ուրիշ, ձալօն վո՛ւնց է. իմացայ բէհայ է :

ՄԱՐԳՐԻՏ

Էնդուր էլ չուստ չուստ հարցնում իս : Էտէնց պիտի, Նատալիա ջան . տարիք իս անց կացնում ինչկի

*) Ա. տառը այս նշանով (Ղ) պէտք է արտասանել որպէս թուրքաց ջ կամ վրացաց ջ :

միգ միտդ կու բերիս :

ՆԱՏԱԼԻՍ

Ինչ անիմ, Մարքրիա ջան, խօս գիդիս իմ բանը . տանէն ուշ ուշ իմ դուս գալի : Վո՛ւնց է հիմի, մէ ասա, է :

ՄԱՐԳՐԻՏ

Ինչ նրա հան է, Նատալիա ջան, վուր էլ ինչ ասիմ. զլիացան աշխ էլա :

ՆԱՏԱԼԻՍ

Գա, ղուրթ իս ասում :

ՄԱՐԳՐԻՏ

Աստուձ գիդենայ : Էս ի՞նչ է, իմքին իս առի :

ՆԱՏԱԼԻՍ

Աբա, լան է, Մարքրիա ջան, ինձ ամա դերիացու կարիլ տիլ :

Արտեմ չեանից ասանում է լըլէկ հարցը եւ բայ անելով սուլիս է Մարգրիսին :

ՄԱՐԳՐԻՏ, զննելով :

Ի՛ւֆ, ի՛ւֆ, ի՛ւֆ, ի՛ւֆ, ի՛ւֆ . . . արեղագի պէծ է տալի, Նատալիա ջան . . . Էս ինչ հիացք իմքին իս առի :

ՆԱՏԱԼԻՍ

Ի՛հ, հէասիկնիրը տեսայ, Մարքրիա ջան, վուր աձ կօ վո՛ւնց մնաց . . . Արի հալա, տիս ինչեր յիդ ասիմ քիդ :

ՄԱՐԳՐԻՏ, Նստալիայի լեւն ասնելով :

Արի, արի, գէնացվալէբի : Աբա ինչ վիքը կօնէի թէ կսօր քու տիսին արժանի կուլէինք . . . Յայ թէ կու ուրախանայ զէդէն :

ՆՍՏԱԼԻՍ

Նս էլ շատ վուեսա է կարօտիլ էի ձիզ, Աստուծ գիղեկնայ :

Թե լեւի արած ներս են հոնում. Սարգիսը եւ Արդէնը հեղեղում են նորոնց . դուսը ներսից փակում է :

ՏԵՍԻԼ Դ

Գ Է Ո Ր Գ , Ի Ս Ա Յ Ի

ԳԷՈՐԳ, վերադարձնալով չախ հողից, հանդիպում է Իսա-յան, որը գալիս է հանդիպուի հողից :

Ս՛հ, բարե, պարոն Իսայի :

ԻՍԱՅԻ, գարհայած :

Ձէնդ ճանանչս դալիս է, ախպէր, ամա չիմ գիղի ո՞վ իս :

ԳԷՈՐԳ

Մի՞թէ այդպէս փոխվել եմ, Իսայի ջան : (Ձեռք արտառնալով) Գէորդ Մասիսեանց :

ԻՍԱՅԻ

Վա՛, դո՞ն ի՛ն, Գիօրգի ջան : (Գրկելով համբարում է նորոն) Իմացիլ էի էկիլ իս, ամա վուր չէիր ասի, Աստուծ գիղեկնայ, չէի կանա ճանչնա : Ի՛նչ խիստ իս փոխվի, ախպէր :

ԳԷՈՐԳ

Տարիքս աւելացան, Իսայի ջան, ու քանի ժամա-նակ է որ ինձ չես տեսել. բայց քեզ տարին չէ յաղթում, էլի այն Իսային ես : Ի՞նչպէս ես, իս

լաւ ես, Իսայի ջան :

ԻՍԱՅԻ

Գուհանամ իմ Աստձուն, լաւ իմ . . . Գուն վո՞նց իս, Գիօրգի ջան, դէդէտ վո՞նց է : Ուրախ կուլի քու գալուն, էլ ինչ ասիլ գուղէ :

ԳԷՈՐԳ

Լաւ ենք, լաւ, Իսայի ջան, փառք Աստուծոյ :

ԻՍԱՅԻ

Է՛, փառք Աստձուն :

ԳԷՈՐԳ, շարունակելով :

Շատ ուրախ եմ որ քեզ տեսայ, Իսայի, շատ : Արի երբեմն մեզ մօտ. մէկ հին աղաթի նստենք, քէֆ անենք : Էլի առաջուայ պէս քէֆ սիրում ես, Իսայի :

ԻՍԱՅԻ

Վա՛, առանց քէֆի գրօշ չաժէ միր մարթը, Գիօր-գի ջան. բաս չիմ սիրում : Ուրիշ, էս ո՞ւր իս էլի էսթէնք :

ԳԷՈՐԳ

Ս՛հ, Իսայի, ամբողջ մէկ ժամ Մարտիրոսեանցի տունն էի փնտրում. հազիւ գտայ : Ի՛նչպէս փոխվել է քաղաքը : (Յոյց արտառնալով եր աջ հողից) Այստեղ չէր՝ որ քօխիք էր. հիմայ նայիր, երեք-էտաժանի տներ են ձգել :

ԻՍԱՅԻ

Լուսաւորվում է միր քաղաքը, Գիօրգի ջան :

ԳԷՈՐԳ

Հա՛, Իսայի, ես էլ այդպէս եմ տեսնում, որ մեր քաղաքը դրսից շատ է փոխվում, լուսաւորեսլ քա-

ղաքների նման է դառնում. բայց բանն այն է որ
ժողովուրդը լուսաւորվի, և սրանից, ես ինչպէս
տեսնում եմ, մենք դեռ շատ հեռու ենք:

ԻՍԱՅԻ

Միր լաւն էլ ու վաղն Աստձու ձեռին է, Գիօրգի
ջան, դուն էլ խօս լաւ գիդիս. ամա ես կարծում իմ
վուր վաղուցվան մարթիքը ուփրօ խէլօք ու արթար
էին: Միր մէջը խօս սէր ու աւտալ էլ չկայ. անօրէ-
նութիւնն ու խափիլը շատացաւ: Հիմի տեսնինք թէ
դուն ու քու նմանները վունց իք խրատում խալսին:

ԳԷՈՐԳ

Է՛հ, Իսայի, ծովումը մէկ կաթիլը ի՞նչ կարող է
անել. դեռ հարիւր տարին էլ բաւական չէ մեզ
խելքի բերելու:

ԻՍԱՅԻ

Ղուրթ իս ասում, ախպէր, ամա դուք էլ գնում
իք, էն մունդրէկ Թէրգի ջուր է ինչոր խմում իք
ու դառնում իք խտակ բօն—ժո՛ւռ:

ԳԷՈՐԳ, ծիծաղում է:

Հա՛, հա՛, հա՛ . . . Օ՛հ, Իսայի, Ֆրանսերէ՛ն էլ
ես սովորել:

ԻՍԱՅԻ

Է՛հ, հէր օխնած, էստուրն ինչ սորվել գուղէ. օրէ-
նը քառսունն ին անց կենում միր քուչօքը. այ, դուն
էլ նրանց հանդը չունիս հաքիդ: (Գիօրգի փէշը Բը-
նում է:) Էս ի՞նչ կարձ է, ախպէր, նստած իս ձե-
ւիլ տվի:

ԳԷՈՐԳ, աւելի է ծիծաղում:

Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛ . . . Այդ ինչ լաւ խօսք

եսացիր, Իսայի, երբէք մաքիցս չի ընկնի: Ճշմարիտ որ
նստած ձեւէլ տուած: Մօղա է, ինչ անես:

ԻՍԱՅԻ

Օ՛հ, Գիօրգի ջան, մօղա ասիր ու պրծար: Աս-
տուձ է վկայ, քունս կոտրվել է էս մօղերեմէն: Իստակ
խառնվեցաւ միր խալսը. էլ ինչրու հաց ուտելումն
էլ մօղնի ին ուզում ժաժ գա: Փուղ պիտի վուր
էստուրը դիմնայ՝ թէ չէ: Ինչրու հիմի մէ ճրաքուէ
մուճով եօլա էի գնում, ախպէր, հիմի կի գիշերով
մէ գրվանքա կարտօփիլի մումը հէրիք չէ գալի: Էս
էլ քի լուսաւորութիւն:

ԳԷՈՐԳ

Ղաւ լուսաւորութիւն է, երանի է մեզ . . . (Ժպտա-
լով:) Գիտես, Իսայի, մէկ վառ մաշխարա առ ձեռ-
քիդ ու տնէ տուն ման արի, հէնց ամենքին խիտն կը
լուսաւորես . . . (Ծիծաղում է:) Է՛հ, մնաս բարեաւ,
Իսայի: (Ձեռք բռնելով:) Արի՛ մեր տունն, այ. ան-
պատճառ շնորհ բերես, թէ չէ կը նեղանամ, հա-
ւատու:

ԻՍԱՅԻ

Գու քամ, գու քամ, բաս չիմ գա: (Ձեռքը Բը-
նելով:) Ամա ինչ նշնելու տղայ իս, Գիօրգի ջան . . .
Հը, ջէր չին նշնում:

ԳԷՈՐԳ

Գու էլ իմ մայրը մի դառնար, Իսայի. այդ ի՞նչ
սովորութիւն ունէք, ճշմարիտ. առանց նշանել և
պասկել ձեր մէջը խօսել չէ լինում:

ԻՍԱՅԻ

Օ՛հ, մէրը լաւ բան է, Գիօրգի ջան. բաս վունց

խիթարիլն խիղճը քի վրայ :
ԳԷՈՐԳ, Ժողովուրդ :

Մայրս որ իմանայ թէ այդպիսի խորհուրդներ ես
տալի ինձ, Իսայի, առաջի բարեկամը քեզ կը հա-
մարէ :

ԻՍԱՅԻ

Միթամ ինչ փիս բան կօնէ. աւտաս ուրիշներու
պէս խափիմ, այ :

ԳԷՈՐԳ

Քո ձշմարտութեան մասին ես բոլորովին հաւա-
տացած եմ, Իսայի ջան : Մնաս բարեաւ : (Տէնէլով
Վարդապետի որոնք :) Հա, Իսայի, դու չը գիտես ար-
դեօք՝ այստեղ ո՞վ է կենում :

ԻՍԱՅԻ, յէր է նայում :

Վահ, բաս չեմ գիտի. էս միր աղա կարապետ
Ձամբախովի տունն է : Ինչի՞ վրայ իս հարցնում.
Փողորթի բան խօսմ չէ, խիստ մինձ փողորթնիր
ունէ :

ԳԷՈՐԳ

Դու ճանաչում ես դորան, Իսայի :

ԻՍԱՅԻ

Վունց թէ կու ճանչնամ. աղա կարապետը իմը
իննամի է ախար, Գիօրգի ջան :

ԳԷՈՐԳ, որոտաւելումք :

Մի՞թէ :

ԻՍԱՅԻ

Աստուձ գիդենայ :

ԳԷՈՐԳ

Իսայի ջան, ծանօթացրու ինձ նորա հետ :

ԻՍԱՅԻ

Ի՞նչ կօնիս. ուզում իս հիղը ննգիր դառնա, թէ
կանտորումը բան ունիս :

ԳԷՈՐԳ, Ժողովուրդ :

Չէ, Իսայի, բոլորովին ուրիշ բան է :

ԻՍԱՅԻ

Վահ, ինձմէն ինչ իս թաքցնում. էրէխայ ձեռիս
մինձացիլ իս :

ԳԷՈՐԳ

Մի նեղանար, մի, Իսայի ջան. ես քեզ կը խոս-
տովանիմ . . . Այստեղ մէկ աղջիկ տեսայ . . . շատ
հետաքրքրեց նա ինձ :

ԻՍԱՅԻ

Ախշիկ տեսար : (ձեռքի ծայրը շրթունքներին է դնում,
յէրոյ յէրոյ որեւիս գլուխը որոտում :) Վայ քու աղիս աղայ,
էլ հիւռու ուր իմ գնում : Ի՞նչ պտուղ իս, Գիօրգի
ջան . . . թային օքմին գովել է ու էկիլ իս վուրքու-
աճկով տեսնիս : Ինչի՞ր իս մօզօնում թէ՛ Մարտի-
րուսինց տունն իմ պտուտում, կօսէ : Չաղ տիղ է,
այ. լաւ նշնելու ախշիկ գուզիս՝ էս է :

ԳԷՈՐԳ, որոտի :

Մի՞թէ նշանելու է, Իսայի ջան :

ԻՍԱՅԻ

Եստի մտիկ . . . վունց թէ նշնելու է. բաս փսա-
կած իս ուզում ուղի :

ԳԷՈՐԳ, ծիծաղում է :

Հա, հա, հա . . .

ԻՍԱՅԻ

Ի՞նչ իս ծիծաղում : Աստուձ գիդենայ, լաւ ախ-

չեկ է ջահիլ, խելօք, սիրուն, ուսում առած ու բոյին էլ պակաս չունէ : (Ասանցին :) Օ՛հ, հորուս մէքիչ միտկ արի :

ԳԵՈՐԳ

Դա է, դա, Իսայի ջան :

ԻՍԱՅԻ, ասանցին :

Այ բախտ . . . (Գեորգին :) Բաս դուր էկաւ քիզ, էլի :

ԳԵՈՐԳ

Շատ, շատ :

ԻՍԱՅԻ, ասանցին :

Մտիկ թէ փուղն ինչ գիդէ : (Գեորգին :) Վուր դուր էկաւ, ախպէր, ու՛ արի՛ ձեռաց Ես շինիմ էա բանը . . . (Գեորգի գրպանին խփած է :) Իէնդի դա մնօղօ, հրա :

ԳԵՈՐԳ

Ինչ ինձ ասա, Իսայի, ո՞վ է այդ աղջիկը :

ԻՍԱՅԻ

Ախչիկն էլ, պարուն դուն իմն իս, միթամ դուն չես գիդի, ինչիւր իս ինձ խափում, իրան Ձամբախովի ախչիկն է. շատ հարուստ մարթ է ու քիզ դրուստ հէրութին կօնէ : Փուղ ու բաժինք էլ էնքան կուտայ, ախպէր, վուր ջէր օջովու էլ չըլին տվի . . . Կուլի դուն էլ լաւ գիդենաս՝ էրկու հազար թուման փուղ ու երիք հարուր թումնի բաժինք. ուրիշ ի՛նչ իս ու գում, տօ : Ախչիկը խօմ, օրինաուուր ախչիկ է, Ես ու իմ հօրին . նրա խասիաթն աժէ մէ ախչիկ : Անումով Մարբրիտ է, ամա օրտով մարբրըաներու գլուխն է . . . Աստուձ գիդենայ, քիզ ամա լաւ բան կուլի, թէ

դուրթ ախչկան հաւնում իս . . . Հը, բի, խիէ ձեռք, բանը քութա՛հ անինք ու պրծնինք :

ԳԵՈՐԳ

Ե՛հ, Իսայի, ի՞նչեր ես խօսում. ես բոլորովին միտք չունեմ այդ ձեռով ամուսնանալ : Մի՞թէ կարելի է կին ուզել առանց փոքր ի շատէ նորան ճանաչելու : Ես ուրիշների վրայ էլ եմ նեղանում այդ մասին, ուր մնաց օր ինքս այդպէս վարվիմ :

ԻՍԱՅԻ

Աբա էնդուր իմ ասում, ախպէր, վուր Թէրզի ջուրը խմում էք, է՛ : Նշելու ախչիկը վուր կայ, անկտրիլ ձմերուկ է. ինչ բախտը կու տայ, կու տայ : Վունց կանաս դուն նրանցը ճանչնա, եա ո՞վ կու թողնէ քիզ իր նշելու ախչկայ հիդ սիլի բիլիք անիս :

ԳԵՈՐԳ, ծիծաղում է :

Հա՛, հա՛, հա՛ . . .

ԻՍԱՅԻ, շարունակելով :

Ձէ, հիմի չի՞ս ուզի մէ շաբաթ քու տուն էլ դըրգին, վուր ուփրօ լաւ ճանչնենաս :

ԳԵՈՐԳ, ասելի է ծիծաղում :

Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛ . . .

ԻՍԱՅԻ

Միզ էտունք չի սազ գա, ախպէր, մինք խօ Ռսնիւր չինք . Ես վուր մէ տեսնելով կնիկ իմ ուզի, ի՛նչով է փիս, փառք իմ Աստուծն :

ԳԵՈՐԳ, ծղրտելով :

Ինձ որ սպանեն, Իսայի, ես այդպէս չեմ կարող կլին ուզել . . . Բայց ի՛նչ ենք այստեղ կանգնել :

զնանք այսպէս խօսելով՝ եթէ ժամանակ ունես :
ԻՍԱՅԻ

Գնանք, ախպէր : Ղուրթ է, 'ես էլ տուն էի
զնում, կնիկս մնում կուլի. ամա մէ քիչ քիչ
պրավածատ կոնիմ : (Ասանչին :) Զիր արիւր ձեռնեմէս
դուս չիմ թողնի : (Գեորգը Իսայու լեւից Բանաժ՝ խօս-
ելով քանոս է նորան դէպի ող, որ Բէթ խորհում պարս-
հում է : Կարապետին :) Էս սհաթիս գալիս իմ, Գիօրգի
ջան :

Գեորգը դուրս է գնում այն հողմից :

ՏԵՍԻԼ Ե

ԻՍԱՅԻ, ԿԱՐԱՊԵՏ

ԻՍԱՅԻ, Բանելով Կարապետի լեւից և ասող Բեթելով
նորան :

Էս սհաթիս յիդ դու քամ, լաւ խաբար կու
իմաց անիմ. էն տղէն մնամ վուր քու Մարքրիտին
տեսիլ է էստի բաղկունումն ու հաւնիլ է : Ուզում իմ
բանը գլուխ բերի, շատ լաւ տղայ է. հէնց էս սհա-
թիս յիդ իմ գալի :

Դուրս է վաղում ող հողմից :

ՏԵՍԻԼ Զ

ԿԱՐԱՊԵՏ, Դէստէ. երկար ժամանակ մնում է ապշած :

Ի՞նչ ասաւ . . . Մարքրիտին տեսիլ է ու հաւնիլ է,
կուէ . . . Իժվիլ է թէ էրազումն է, թէ էն տղէն

մասխարա է գցի . . . Ախար իմ Մարքրիտին ո՞վ կու
հաւնի : *) Մէ տեսնիմ ինչ խաբար է : (Դուրս ծե-
ծում է :) Ո՞վ կուլի էն տղէն . . . Լաւը կի էրեւում է,
ախպէր, ովոր վուր է ու . . . Իմ օրումը չիմ տեսի . . .
Լաւը վուր չըլի, Իսային չէր խառնվի. իմ խաթր շատ
ունէ . . . Կուլի ղուրթ Աստուծ օլորմայ ու Մարք-
րիտի ցաւեմէն պրծնիմ . . . Իժար չէ՞ մարթու համա
վուր փուղ էլ ունենայ, խիլք էլ ունենայ ու ախ-
չիկը զեղծ ըլի . . . Ի՞նչ օյին գուզիք հանիլ իմ,
Աստուծ զիզենայ. ամա վուր ղնամթը չէ կտրում՝
ի՞նչ անիմ. վուր օջով չէ ուզում . . . Էսէնց էլ
աշխարք կուլի . . . Լաւ տղէրքն ասում ին՝ սիրուն
ըլի, կուէ, ու փսին խօս՝ Էս ինքս չիմ տա : (Սարգիսը
դուրս Բայ է անում :) Այ քանդվի էս աշխարքը,
լաւն էլ ու վաղն էլ հիդը, հըն :

Շատուով ներս է մտնում :

*) Այս տեղ հանգուցեալ Ամերիկեանը աւելացրել է մշտ այս
խօսքերը՝ «Թէ ինչ էր տեսի, Էն ի՞մ Մարքրիտին : »

ՏԵՍԵՐԸ ԵՆ ԵՐԿՐՈՐԴ

Կարապետի տանը շքեղ սենեակ երեք ղոնոպ՝ աջ, ձախ եւ մէջ տեղը: Զախ կողմը կուշետկա փոքրիկ սեղանով եւ բազկա-
 թոռով, իսկ աջ՝ դիւան մեծ սեղանով եւ բազկաթոռներով -
 խորքումը աթոռներ: Սեղանները ծածկուած են զեղեցիկ սփուռ-
 ներով եւ դռները դրապիրներով: Մեծ հայելի եւ ժամացոյց, որը
 բանում է եւ ցոյց է տալի կէսօրից մէկ քառօրը անց:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԿԱՐԱՊԵՏ, ՄԱՐԳՐԻՏ

ԿԱՐԱՊԵՏ, հարմար է մեջքի դռանից, ծոծրը հայտնու առաջ է
 գալի եւ դռնէն վերադառնալով ուղիւ սեղանի վրայ՝ հոն-
 չում է:

Մարքրիտ:

Նստում է այն սեղանի ճոխ:

ՄԱՐԳՐԻՏ, դուրս գալով չափս դռանից:

Համէ:

ԿԱՐԱՊԵՏ

Էսօր բալկոնումն էլիլ ին:

ՄԱՐԳՐԻՏ

Հն, մամի ջան, մէկ դուս գնացի:

ԿԱՐԱՊԵՏ

Օքմին տղայ տեսաւ քիզ բալկոնումը:

ՄԱՐԳՐԻՏ

Չէ, մամի ջան, օչով չիմ տեսի:

ԿԱՐԱՊԵՏ, դարձանում է եւ ստանչին:

Ի՞նչ մօզօնից էն սարսաղ Իսային. նրան էլ մարթ-
 ինչ ասում է, էն սհաթին աւտում է: (Սարգսիկին:)
 Մէ ինձ ասա, բալկոնը ինչի՞ համա դուս գնացիր.
 շատ սիրուն կարտինկա իս, քու գլխի արիւը, վուը
 զիփունանքը քիզ վրայ մայիլ մնան:

ՄԱՐԳՐԻՏ, կիտայայ:

Սէյր անելու խօ չը դուս գնացի, մամի ջան: Կի-
 նաղամ դանիրը կոտրտեցին. դուս մտիկ անիմ, տեհ-
 նիմ նատալիէն է, ու հանց դուսը բաց արին, էն
 սհաթին յիզ տուն էկայ, Աստուճ զիդենայ:

ԿԱՐԱՊԵՏ, դարձանում է:

Նատալիէն էստի էր դանա:

ՄԱՐԳՐԻՏ

Հիմի էլ էստի է, դէդի մօտ նստած:

ԿԱՐԱՊԵՏ

Է՞ստի է: Իժուճնա՞ էր դուսը բալկոնումը:

ՄԱՐԳՐԻՏ

Չէ, մամի ջան, նա էլ չէ էլի:

ԿԱՐԱՊԵՏ, դարձանում է:

Բեսար նամազուլ իս անում, դրուստ ասա:

ՄԱՐԳՐԻՏ

Աստուճ զիդենայ, մամի ջան, չէ էլի. ինչ բալկո-
 նի սիրտ ունէր, ահու ջէր էլի սիրտը յիդ չէ էկի:

ԿԱՐԱՊԵՏ

Ի՞նչ ահ:

ՄԱՐԳՐԻՏ, ստանչին:

Վայ մէ, էս ի՞նչ ասի, խօ նատալիէն կու ջգրվի:
 (Կարսուկեան:) Չիմ զիդի ինչի վրայ էլ վախեցիլ է:

Է108-109

15-155
 522-2004-325



ԿԱՐԱՊԵՏ, Վեր հենարդ:

Մարբրիտ, ինձ խօ կու ճանչնաս. ասան դրուստը, թէ չէ էլ ինձմէն չես պրծնի:

ՄԱՐԳՐԻՏ

Վա, ես ի՞նչ անիմ, մամի ջան. ասում էր թէ մէ ֆրանտ տղայ վախեցրուց, կօտ. ամա գէնացվալէ, մամի ջան, ինձմէն վունչիչ չասիս, թէ չէ նրամէն էլ չեմ պրծնի:

ԿԱՐԱՊԵՏ, ասանչին:

Փռանտ տղայ: (Մարգրիտին:) Լաւ է. գնան նատալիին ասան էստի գայ: (Մարգրիտը գնում է:) Դէգէտ վունց է:

ՄԱՐԳՐԻՏ

Ելի պառկած է:

Դուրս է գնում Յոն դոնիչ:

ՏԵՍԻԼ Բ

ԿԱՐԱՊԵՏ, Դէտի:

Յայ էնէնց պառկի վուր էլ չը վեկենայ, հը: Օղլուշաղ մօզօնօղին էլ ի՞նչ ասիմ. . . Ախար պատիժ է. դուս իս գնում, քրտինք իս քաշում, սուտ ու զուրթ իս ասում, տուն իս գալի մէ թիքա հացը քնթէր հանում ին. . . Հալթաթտա, ումը չի պատահի հիվընդութին. ամա վուր մարթ գնայ, զոռով հիվընդանայ, էնդու պէս էլ ասմախութին կոնը աշխարքումը. . . Նատ վուխտ էր հէքիմ չէր էկի իմ տուն ու ճրէլ ճրէլ թումնիրը չէր համբրիլ տիլ. . . Յօրէն նատալիէն գալիս է. վունց կոտրիմ վուր

դրուստն իմանամ, թէ չէ հիմիկվան վուխտը խօ զրուստ խօսիլը աղաթ չէ:

ՏԵՍԻԼ Գ

ԿԱՐԱՊԵՏ, ՆԱՏԱԼԻՍ

ԿԱՐԱՊԵՏ, Նատալիտին, որ հոնում է Յոն դոնիչ:

Օհ, բարով, նատալիա ջան:

ՆԱՏԱԼԻՍ

Բարով, ձիա ջան:

Մէ՛ ձէնու չէտէ էն ասլի:

ԿԱՐԱՊԵՏ

Էս ի՞նչ խէչմէն է, միտտ ինք էկի, ասլիկալարուն:

Նատում էն:

ՆԱՏԱԼԻՍ

Ի՞նչ խէչմէն պիտի ըլի, ձիա ջան. իմացայ վուր ձայնն բէհալ է ու էկայ տեսնելու:

ԿԱՐԱՊԵՏ, ասանչին:

Էտ է վուր աւտացի: (Նատալիտին:) Ի՞նչըր իս խօտում, նատալիա, հէնց գիղեհաս քիղ չը ճանչնենամ: Հիմի քու մարթու տուն գնալու վուխտն է, էս չախըն ի՞նչ կուլիս շինում դուն էստի, թէ վուր մէ բան չլի:

ՆԱՏԱԼԻՍ

Ի՞նչ բան պիտի ըլի, եագ խօմ չեմ:

ԿԱՐԱՊԵՏ

Նա էլ գիղիմ վուր եագ չիս ու ջեղրա էլ էնդու վրայ է գալի, վուր ուշ ուշ իս գալի. ամա ես հու

տով խմանում իմ վուր, առանց միգեզ չէիր դա էստի :
ՆԱՏԱԼԻԱ

Գուն վուր, ձիա ջան, բանեմէն բան կու հանիս.
ասում իմ վուր ձալօի տիս էկայ, Աստուձ գիղեհայ :
ԿԱՐԱՊԵՏ, առանցին :

Խերխիս չը կտրից : (Նապոլեոնի ժողովուրդ) Բաս
վունց էր վուր էն սղէն վախեցրուց քիզ :

ՆԱՏԱԼԻԱ, շինվում է :

Քիզ ո՞վ ասաւ, ձիա ջան :

ԿԱՐԱՊԵՏ

Ծիտը խաբարն էքի :

ՆԱՏԱԼԻԱ

Մարքրիտը կօւէր էլե, նրա բերնումը խօ լօբի չե
դըչըվե :

ԿԱՐԱՊԵՏ

Չէ, Մարքրիտը ինձ վունչիչ չէ ասի, ամա մէ ինձ
պատմէ վունց է էլե էտ բանը :

ՆԱՏԱԼԻԱ

Էհ, անմիղ բան էր, ձիա ջան, Աստուձ գիղեհայ :
ամա փեսին չասիս գէթաղվանէ :

ԿԱՐԱՊԵՏ, առանցին :

Իրբաւ ձուգը չանգլին : (Նապոլեոնի) Չէ, չիմասի,
ասա :

ՆԱՏԱԼԻԱ, ամուր ձօր գոշելով դէպի Կարպէտը :

Քիմէն ինչ թաքցնիմ, ձիա ջան : Էս օր առու-
տեհան տալս ղըղիլ էր թէ՛ նուր մաղաղինումն էժան
ապրանք ին ծախում, կօւէ : Քանի վուխտ էր ինձ
ամա դերիացու էի ուզում, ես էլ ղնացի իմ տալուչ
Տիզ ու ինչ ուզում էի առայ :

ԿԱՐԱՊԵՏ, Հեգնային չեով :

Էտ է, հիմի մինք տանը նստինք ու միր բանը
դուք շինեցէք :

ՆԱՏԱԼԻԱ

Մաղաղինեմէն վուր դուս էկանք, տայս ուրոր գնաց,
հարկաւուր բան ունէր, ու ես մէնակ միր պատի բջի
աբով էկայ էստի :

ԿԱՐԱՊԵՏ

Յօրէսի դէնը առանց բջի էլ կու ման դաք Ասծու
օղորմութենով : Իժնում . . .

ՆԱՏԱԼԻԱ

Դրանը վուր մօղ էկայ, ձիա ջան, մէ ջէհէլ Ֆրանտ
տղայ առաչ էկաւ, մէ հէստի հանգը գլուխ վեր էքի,
կօւէիր նրա բիձու ախչիկն ըլիմ, ու հարցրուց թէ՛
Մարտիրոսեանցի տունը խօմ չէք գիղի, կօւէ : Մէբաշ
հէստի վախեցայ, ձիա ջան, վուր ահու կինաղամ
սիրտս գնաց :

ԿԱՐԱՊԵՏ, ճիղի ծայրը շրնուսներին է պանամ :
Իժնում . . .

ՆԱՏԱԼԻԱ

Իժում էլ ինչ, ասի վուր ես նրա տունը չիմ դի-
ղի. նա էնէնցը դիվիր գնաց միր բուչօքն ու ես
տուն էկայ էստի :

ԿԱՐԱՊԵՏ

Վա, հէր օխնած, էտու համա էլ ուր էիր վախե-
նում. խօմ չէր կուլ տայ :

ՆԱՏԱԼԻԱ

Արի ասա էլե, մէ բաշ վախեցայ .

ԿԱՐԱՊԵՏ

Ի՞նչ հանգի տղայ էր :

ՆԱՏԱԼԻԱ

Դիվ նրան էի անդղում, նրա գլխի արիւ-ը գիդենայ :

ԿԱՐԱՊԵՏ

Չէ, մայինց, օխար :

ՆԱՏԱԼԻԱ

Մէ ջէհէլ Փրանտ տղայ էր, էլն, ամա խիտ կարճ շուրիւր ունէր հաքին ու ձեռին էլ զիղին փեր- չըտկնիր .

ԿԱՐԱՊԵՏ, ասանչին :

Հէնց նա է : (Նստալիային :) Կարճ շուրիւր ունէր ասում ին :

ՆԱՏԱԼԻԱ

Հն :

ԿԱՐԱՊԵՏ, Գլուխը շարժելու և ասանչին :

Հէնց էնէնց է . ամա Իսային խօսք չը խափից ինձ : (Նստալիային :) Էտ լու բան է էկի զլխիտ, ախպեր :

ՆԱՏԱԼԻԱ

Է, ձիա ջան, վուր միտս է դալն, ծնդնիրս ջեր էլն դողում է :

ԿԱՐԱՊԵՏ

Նատ լու էլ է ըլում. ձիգ ինչըու մէ լու օյին չը գան, խիլքի չիք գա : Աբա ի՞նչ կարք է վուր մա- ղազկներումն ու քուչա քուչա մէնակ սէյր իք ան- ում : Տօ, դերիայ գուզէր, քու մարթն ուփրօ էժանն ու լուր չէր ասնի :

ՆԱՏԱԼԻԱ

Գէնացվալէ, ձիա ջան, փեսին վունչիչ չասիս, թէ

չէ խօս գիդիս նրա խասիաթը, էլ տանեմէն դուս չի թողնի :

ԿԱՐԱՊԵՏ, ասանչին :

Գժվլը իմ : (Նստալիային :) Էտ է, ջհէլ տղէրքը ձիգ չիդ քուչումը մալահաթնիր սարքին ու (Կանայի չայնուլ :) փեսին վունչիչ չասիս : (Իր չայնուլ :) Շինվե- ցաւ մարդկերանց բանն էլն :

ՆԱՏԱԼԻԱ

Քն, Էտ ինչ միդ ունիմ :

ԿԱՐԱՊԵՏ

Էն միդն ունիս վուր մաղազիք ման գալը միդ կնիկարմուն չի վայիլն, չէ :

ՆԱՏԱԼԻԱ

Թէ կի աշխարքը ման է գալն, քա :

ԿԱՐԱՊԵՏ

Էհհ, աշխարքը : Էտ է վուր շատ մէկս մէկու մտիկ տալով խտակ քուացիլ իք, էհ : Մախրաս, բայրաղներտ խիտ իք վիթ թողի : (Չայնուլ Դեղեղուլ :) Ուրիշ, ինչ բարին հարցնիր, խօ լու իս :

ՆԱՏԱԼԻԱ

Փնուք Աստձու, ձիա ջան. դուն վունց իս :

ԿԱՐԱՊԵՏ

Վունցոր տեսնում իս, լու իմ : Ամա ձալօխը խօս տեսար, մէ քիչ նրա բէհալըթինը քէփս խարաբ է անում :

ՏԵՍԻԼ Դ

ՆՐԱՆՔ, ՄԱՐԳՐԻՏ

ՄԱՐԳՐԻՏ, ԴՈՒՍ ԳՄԻՆԻ ԿՐԻՍՏՈՍ:

Ճաշը վճարողի կու անուշ անիք, մամի ջան, բալ-
կօնումը թէ բախչումը:

ԿԱՐԱՊԵՏ

Ասան վեր բախչումը գցին սուփրէն ու մէ պրիբոր
էլ աւելցնին:

ՆԱՏԱԼԻԱ

Ձիա ջան, ես ճաշին չիմ կանա կենա:

ԿԱՐԱՊԵՏ

Լայիլ կօնիս:

ՆԱՏԱԼԻԱ

Աստուծ գիղենայ, չիմ կանա, ձիա ջան: Իսային չե
էլ գիղի թէ էստի պիտի էկիլ էի:

ՄՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՄԱՐԳՐԻՏ:

ԿԱՐԱՊԵՏ

Հաջաթ չէ, դուն արխային կաց:

ՄՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՄԱՐԳՐԻՏ:

ՆԱՏԱԼԻԱ, ճիշտը ՄԱՐԳՐԻՏ:

Հիմի ի՞նչ կուէր վուր իմ ափալը ձիին չէիր ասի:

ՄԱՐԳՐԻՏ

Ո՞վ է բան ասի, ի՞նչ իս ասում:

ՆԱՏԱԼԻԱ

Քու ճօթրվիլը գիղենայ:

ՄԱՐԳՐԻՏ

Ի՛հ, ու ցնաւուր իս Նատալիա ջան, արա մամին

Հարցու թէ՛ բան իմ ասի:

ՆԱՏԱԼԻԱ, չե-չեքով սպասումս է Մարգրիտին:

Սուրափ տու, թալլափիան:

ՄԱՐԳՐԻՏ

Քան, ասում իմ վուր վունչիչ չիմ ասի. ի՞նչ անա-
ւատալի իս:

ԿԱՐԱՊԵՏ, Տրամադանից պիտի ելլի:

Հը, ի՞նչ ղարմաղալ սարքեցիք: (Մարգրիտին): Ես
քիզ չասի, թէ գնա մէ պրիբոր աւելցնիլ տու: Դէ,
չնուտ արա, էն մարթը գու քայ, ամութ է:

ՆԱՏԱԼԻԱ

Ո՞ւմն ունիս ղոնաղ, ձիա ջան:

ԿԱՐԱՊԵՏ

Ղոնաղ չէ, հիմի սաղանդար. քու մարթը պիտի
գայ:

ՄԱՐԳՐԻՏ, ՄՈՒԹՅՈՒՆ:

Ես ի՞նչ լաւ օր լուսացաւ:

ԴՈՒՍ ԵՒ ՎԱԿՈՒՄ ԿՐԻՍՏՈՍ:

ՏԵՍԻԼ Ե

ԿԱՐԱՊԵՏ, ՆԱՏԱԼԻԱ

ՆԱՏԱԼԻԱ

Բաս ես չիմ կենայ, ձիա ջան, էստի. վայ թէ
ջիզը գայ, վուր տունը մէնակ իմ թողի:

ԿԱՐԱՊԵՏ

Տօ, ինչի՞ պիտի ջիզը գայ. նա ինձ էս սհաթիս
ասաւ վուր ճաշին գուքամ քի մօղ, կօւէ. ես էլ

կօսիմ՝ վուր տուն էկայ, ալօշկեմէն միթամ քիզ աե- սայ վուր տուն էիր գնում ու կանչեցի: Էստումը ի՞նչ կայ ջգրվելու:

ՆԱՏԱԼԻԱ

Վայ թէ հոէնց ուփրօ խիալ տանէ, ձիա ջան:

ԿԱՐԱՊԵՏ, ասանչին:

Խիստ խուռը փիքը անող վուր նա է: (Նապոլեոն յին:) Տօ, ի՞նչ կայ հատի խիալ տանելու. կօսիմ էսէնց էր, նա էլ պիտի աւտայ վուր էսէնց էր:

ՆԱՏԱԼԻԱ, ուրախ:

Բաս վուչիչ չին ասի, ձիա ջան:

ԿԱՐԱՊԵՏ, ասանչին:

Ախմախ էլ կուլում: (Նապոլեոն յին:) Ասի վուր չիմ ասի, խօ գիղիս՝ իմ խօսկը խօսկ է:

ՏԵՍԻԼ Չ

ՆՐԱՆՔ, ԻՍԱՅԻ

ԻՍԱՅԻ, ներս մտնելով մըր ասանչի, դարձացած դասնում էր հեղի Նապոլեոն:

Վա, դուն էստի՞ր իս գանա, եփն էկար:

ՆԱՏԱԼԻԱ

Հէնց էս սահաթիս:

ԻՍԱՅԻ

Ի՞նչ գիղեիր թէ ես էստի պիտի գամ:

ՆԱՏԱԼԻԱ

Վուր չէին իմաց արի, ի՞նչ կու գիղէնէի, իմաստուն խօմ չէի: Տուն էի գնում, ձիէն ալօշկեմէն

տեսաւ ինձ ու ասաւ թէ փեսէն ճաշին գու քայ, կօսէ, ու դուն էլ արի:

ԻՍԱՅԻ

Հէնց հիմի:

ՆԱՏԱԼԻԱ

Հէնց հիմի, քա:

ԻՍԱՅԻ, ասանչին:

Ո՛ւհ, սիրաս յիզ էկաւ: (Նապոլեոն յին:) Ղճըթ իս ասում:

ԿԱՐԱՊԵՏ, վեր է կենում:

Հէր օինած, տուն էկար՝ մէ բարով ասա, հազար բարի լսէ. սկտսովի անելու խօ չիս էկի:

ԻՍԱՅԻ

Ի՞նչ սկտսովի խիլք ունիմ ես. մէ բաշ արմցայ վուր սրան էստի տեսայ:

ԿԱՐԱՊԵՏ

Ի՞նչ կայ, ախպէր, էստի արմնալու. դուն չասիր թէ էս սահաթիս գու քամ, կօսէ: Տուն էկայ, տեսնիմ դա տուն էր գնում ու կանչեցի. թէ շորակալ չիս, գուղիս յիզ տուն ղըգէ, հաւիրը ջուր տալ գուղենան: Աբա էնդուր իմ ասում, Իսայի, վուր միղմէն հիգու իք ման գալի է. զնալ ու գալ վուր ունէնսք միղ մօղ, քու կնդայ էստի ըլելու վրայ չէիր արմնա:

ԻՍԱՅԻ

Ի՞նչ ասիմ, Գարասիմ Եակուլիչ. Աստուծ գիղենայ, հիմիկվան Ժամանակումը հէնց գիղենաս օրիրը կարձացաւ. մարթ իր բանին էլ չէ վրահանում:

ԿԱՐԱՊԵՏ

Թու գուլի գուլթբս, ասած է, քաղա օր խելիթ իճնկլա : է՛, մախլաս . ուրիշ վճենց իս : (Նսպում է :)
Վա՛, նստեցէք է :

Իսային և Նսպայիան նսպում են այնպէս, որ
Իսային գրանդում է Կարապետի և Նսպայիայի
ձեջ :

ԻՍՍՅԻ

Փառք Ասծու, վճենցոր տեսնում իս, ապրում ինք .
խնամին վճենց է :

ԿԱՐԱՊԵՏ

Նրա բէհալութինը իս ջանդա բէզար արաւ ինձ :
յօրէն էլի պառկած է :

ԻՍՍՅԻ

Աստուձ լաւութին տայ, ի՛նչն է :

ԿԱՐԱՊԵՏ

Աստուձ վուչ զիդէ իմ գլուխը :

ՆԱՏԱԼԻԱ, Իսայան :

Ձալթի զլխացան էլի աշլա է էլի :

ԿԱՐԱՊԵՏ

Տօ՛, հաղիբ զրուստ խօսիք : Երիզուն տասերկու
սհաթն էր վուր տուն էկաւ . . . Ինչոր անդէր ու
մունդրէկ լոտօ իք մօզօնի . . . զառափի զլուխ պիտի
վուր ձիր համբրբին զիմնայ : (Իսային գլուխը շարժելով
յանքիմանում է Նսպայիային :) Քառսուն հոքի մէտի մօզ
իք ըլում մէ օթախումը, հէնց զիդենաս Խօջի բաղ-
նին ըլի, իժում տաք տաք զուս իք գալի կէս զի-
շերին ու հալթաթտա զլուխն էլ կու ցաւի ու վուտն
էլ : Մախլաս, մէ քիչ պիտի լիամներուզ զայլմ պա-

հինք, թէ չէ վայ միր միսկը յօրէսի դէնը :

ԻՍՍՅԻ

Աւետրանի խօսկիր իս ասում, Գարասիմ Եակուլիչ,
ես ու իմ հոքին :

ՆԱՏԱԼԻԱ

Խիղճ ախչկիրք, եարաբ ինչ պիտի ըլի միր չարէն .
էլ տէատրումը բան չը մնաց վուր միզ վոյ չասին :
Աստուձ զիդենայ լաւ բան է . մարթիքն ուղենան
բաղը զնան քէփ անելու, ուղենան մէկ մէկու մօզ
րիզիս պուրիք սարբին, ուղենան ինչրու կէս զիշերն
էլ կլուբումն ըլին ու, մինք կի մէ լոտօ էլ չը կանե-
նանք իսաղա : Բաս մէնակ չուրս պատի մէջը ճիտը
ձքինք ու նստինք : Թէ գուղիք դուք զիփ տանը կա-
ցէք, մինք էլ տանը կուլինք :

ԻՍՍՅԻ

Լաւ է, ձէնդ, ճիանուրը մի սարբի : Ետէնց իք խօ-
սում վուր տուն ու տիղը քօծի ու բջի արով է մնում, է՛ :

ԿԱՐԱՊԵՏ

Նատալիէն էլ զուրթ է ասում, Իսայի : (Նսպայիան
էկէնտիան շարժումընէր է ցոյց պալի Իսայան :) Թէ դրանք
խէրով չին, մէ մինձ խէրով ապրանք մինք էլ չինք . . .
է՛հ, զնանք բախչէն, ինչրու սուվրէն էլ կու գցին :
(Վէր էն կէնում :) Հա՛ . . . (Նսպայիային :) Ես սահաթիս
գալիս ինք, Նատալիա :

Նսպայիան գնալով, Իսայայ ծածուկ, շար-
ժումընէրով ինքում է Կարապետին, որ
Իսայան ոչինչ չասէ . Կարապետը նշանե-
րով հանգստանում է Նսպայիային, որը
յեկոյ դուրս է գնում չախ դասնից :

ՏԵՍԻԼ Է

ԿԱՐԱՊԵՏ, ԻՍԱՅԻ

ԿԱՐԱՊԵՏ

Ի՞նչ էիր ասում էլախո, Իսայի :

ԻՍԱՅԻ

Ել ի՞նչ էի ասում. արա ի՞նչ իս տալի, ախչկաս բանը շննիլ իմ :

ԿԱՐԱՊԵՏ

Է՛հ, հանաք իս անում, Իսայի :

ԻՍԱՅԻ

Հանաք կի չէ, զուրթ իմ ասում, քու արիւը քունը սուտ չը գիղենաս, իմ արիվն իմ ասում : Աբա վուր ասում իմ, թէ մարթ չի գիղի ինչ կու պատահի :

ԿԱՏԱՊԵՏ, ԽՈՒՄՆՅԻՆ :

Թէ էնէնց է, 'ես լաւ գիղիմ ինչոր պատահիլ է :

ԻՍԱՅԻ, շարանակելով :

ՏՕ, հալալ միամիտ ինձ ամա տուն էի զնում. հէնց էստի եւէտ էն տղէն ուստ էկաւ ու միամիտ հիղը խօսելիս, իմացայ վուր Մարքրիտին տեսիլ է, չիմ գիղի բարիօնումը թէ զրանը, ու շատ հաւնիլ է :

ԿԱՐԱՊԵՏ, ԽՈՒՄՆՅԻՆ :

Ել էստումը խիալ չկայ, Նատալիի օյինն է :

ԻՍԱՅԻ

Իմը ջեր խիւքս չը կտրից. ամա վուր փիքը արի թէ մարթ ու կնգայ բանը 'երգնքումն է շննվում, կօսէ, 'ես էլ հալաթտա ինչ կանացի՝ Մարքրիտին

գովեցի . հոքուս էլ մինձ միսկ չարի . լաւ ախչիկ է, 'ես ու իմ հոքին : Հիմի դուն կու գիղենաս, եա կու իմանաս, զուրթ Մարքրիտին է տեսի՞, թէ էստի ուրիշ օքմին է էլի :

ԿԱՐԱՊԵՏ, որ խորին ուշադրութեամբ աննջ էր դնում, փոքր ասորով : Խոսակցիլ չէր արեւ :

Կուղիս ծփաց ախար է՛ : (Խոսյուն :) Հա՛, Մարքրիտն ասիլ էր դեղին, թէ քուչի զրանը կանգնած էի, կօսէ, ու մէ ջհէլ փռանտ տղայ անց ու դարց արաւ, կօսէ, ու խիստ խիթից, կօսէ :

ԻՍԱՅԻ

Հէնց էտէնց է բանը, վունցոր մաշուր արի :

ԿԱՐԱՊԵՏ, ԽՈՒՄՆՅԻՆ :

Էս է վուր իմացար : (Խոսյուն :) Ամա իրան վունչիչ չասիս թէ Աստուձ կու սիրիս, միթամ վունչիչ էիս գիղի :

ԻՍԱՅԻ

Վա՛, խիւքս հաց ու պանրի հիղ իմ կերի՛ :

ԿԱՐԱՊԵՏ

Հա՛, էնէնց մուղայիթացնում իմ : (Նստում է :) Քու արիւը, իմացիլ կուլի վուր փուղ շատ ունիմ, ու հալաթտա ախչիկս էլ կարտինկա կու էրեէր :

Հրաւիրում է Խոսյուն նստելու :

ԻՍԱՅԻ, նստելով :

Քու աղիզ արիվն իմ ասում, Գարասիմ Նակուլիչ, վուր էն տղի հիղ խօսելիս, իմ մտկումն էլ էտ անց կացաւ : Չասիս թէ խիւքս բան չէ կտրում, հըրա՛ . . . Փիքը արի, վուր շթային օքմին իմքին բան է ասի նրան ու էստի զասիղի անց ու դարց է արի, Մար-

քրիստին ուզեցիլ է իր աճկով տնդղի : Ախար խիստ բօնժուռնիր ին էս հիմկվան տղէրքն է . օջովի խօսկին չին աւտում : Ծանդր ու թէթիւ է արի իր մտկումը , ու խօսելիս էլ մաշուր արի վուր սիրունութենի վրայ խիստ հարց ու փութոյ չէր անում . հէնց էն է խասիաթն ու վարքն էր հարցնում զիս :

ԿԱՐԱՊԵՏ

Գիդիմ, դուն էլ կու գովէիր :

ԻՍԱՅԻ

Վա՛, բաս կու փտնէի . նշնելու ախշկայ խասիաթը սուտ էլ վուր գովին՝ միխկ չէ , կօսէ , ու Մարքրիտը խօմ զուրթ լաւ խասիաթ ունէ :

ԿԱՐԱՊԵՏ

Իժում, ո՞վ է էտ տղէն . իմ օրումը չիմ տեսի :

ԻՍԱՅԻ

Շատ լաւ տղայ է , նս ու իմ հոքին , Գարասիմ Եակուղիչ :

ԿԱՐԱՊԵՏ

Ախար ո՞վ է , ո՞ւմ վուրթի է , մէ ասա է . . .

ԻՍԱՅԻ

Ա՛յ Մասիսինց Նիկողոսի տղէն է էլի . էս մօզիկ ժուզն էկաւ ու խիստ լաւ տիղ ին տվի էստի :

ԿԱՐԱՊԵՏ

Նա՛ է : էտ խօմ Աստուճ զամբիլով դէվէր է զրզի միզ ամա : Իմացիլ իմ , շատ լաւ տղայ ին գովում ու զուրթ լաւ տիղ էլ է ճարի :

ԻՍԱՅԻ

Վա՛, խօմ զիդիս , հաղար թումէր սուտ չիմ ասի , էն էլ քի մօզ :

ԿԱՐԱՊԵՏ

Իժում, փութի (անում տվիր իմբին : Վա՛, բաս առանց էտ կուլէր . քրթամի ջօջօխէթս գասնաթլէբս , ասած է :

ԿԱՐԱՊԵՏ

Բանի՞ ասիր :

ԻՍԱՅԻ

Յանն իր պատիւով էլի : անա բիլ ցոյն , անա ԿԱՐԱՊԵՏ էտ ղադամին մէ բա՛շ : Զա՛նց ինչ խոսք :

ԿԱՐԱՊԵՏ

Չա՛ն, մէ բա՛շ բերնեմէս դուս թուա :

ԿԱՐԱՊԵՏ

Չէր օինաժ , դանա նս մէ օր վուր ասի թէ՛ էտ ղադամի կու տամ , խօմ շնտի թէ հէնց ով ուստ դայ դիվունանցն էտնց ասա : Ձեր կէսը կօսէիր , իժում սանդուխտ սանդուխտ զիվիր կէհէիր :

ԻՍԱՅԻ

Ձեր ըլն , քու արիւը , Գարասիմ Եակուղիչ , մուշտարիք շատ ունէ :

ԿԱՐԱՊԵՏ

Ռէ՛ լա՛ , ինչ ասիլ ին՝ ասիլ իս , օղունդ մէ օտկէ ու էս Մարքրիտի ցաւեմէն սրծըցրու ինձ :

ԻՍԱՅԻ

Օտկիլ էլ իմ ու պրծիլ էլ , ամա բանն էստու վրայ է , վուր մէ տիղ հարմըքումը , էա նշանեքումը պիտի աաստ բերինք Մարքրիտի հիւ :

ԿԱՐԱՊԵՏ, ԿԱՐԱՊԵՏ:

Կու շինվի բանս, հը: (Իսայան:) Ել ինչ հարսնիք
ու նշանտէք, Իսայի, թէ՞ վուր ասում իս՝ տեսիլ է ու
հաւնիլ է, կօտէ:

ԻՍԱՅԻ

Վա, հէր օխնած, մարթ է ու քէփ:

ԿԱՐԱՊԵՏ

Վուր չը հաւնի, իժոճմ:

ԻՍԱՅԻ

Վուր չը հաւնի, նա իր համա, մինք միզ ամա.
զօռով բան կուլն՝ աշխրբքումը:

ԿԱՐԱՊԵՏ

Չէ, Իսայի, դուն նրան էստի բի էս գիշեր էւէտ:

ԻՍԱՅԻ

Իժոճմ: ԿԱՐԱՊԵՏ, ԿԱՐԱՊԵՏ, ԿԱՐԱՊԵՏ:

Իժոճմ ինչ, բի էլի:

ԻՍԱՅԻ

Ձեր վուր նշան տալու խօսկ չէ տվի, վոնց բերիմ:

ԿԱՐԱՊԵՏ

Հաջաթ չէ, նշանն էլ կու տալ տանք էլի:

ԻՍԱՅԻ

Վա, վուր չը տայ, խօմ խայտառակ կուլնիք:

ԿԱՐԱՊԵՏ

Վոնց թէ չը տայ, նրա հօրն օղորմի, իմ տուն
տուն գայ ու առանց նշան տալու դոն գնայ:

ԻՍԱՅԻ

Նս էլ էտ իմ ասում, Գարասիմ Նակուլիչ, վուր
մէ տիղ հարսնբքումը. ես նշանտէքումը ուստ բե-

րինք է: Եստի վունչիչ ամութ բան չկայ, համ էլ
նի կու խնանայ:

ԿԱՐԱՊԵՏ

Աբա քիմէն չիմ արմնում, Իսայի, իմ մունդրէ-
կի ափալը չիմ գիղի. էն տղէն մէկ հիռու մօղիկ
տեսիլ է ու ձիւ հաւնիլ է, հիմի գոզիս դիփ մէտի
մօշլա ըլի բանը: Չէ, ախպեր, դուն նրան տուն բի
էստի, տուն. էս գիղիմ վուցոր մէ նմուտումը մա-
լանաթը մէչը կու դնիմ:

Վէր է Կէնում ե մի գոնի գայլ տայ
ԿԱՐԱՊԵՏ, ԿԱՐԱՊԵՏ, ԿԱՐԱՊԵՏ:

Բաս զօռով իս ուզում նշան տալ տա, էտ խօմ
խտակ խափելու հիսար է. իժոճմ մի՞խկ չէ Ասծու
մօղ:

ԿԱՐԱՊԵՏ, ԿԱՐԱՊԵՏ, ԿԱՐԱՊԵՏ:

Խափիլը վունն է, ինչիլ իս ասում, Իսայի. դուն
ուզում իս հայր Աբրահամու վախտվան հանգը ժաժ
գան: Ասած է՝ ինչ երգիր գնաս, էն երգրի գրակ
ծածկէ, կօտէ: Աբա քիղ իմ հարցնում, էս միր
քախկումը վուր մէկ մէկու չըլին խափում, մէ օր
կանայ մարթ ապրի, կանայ վուտը վուտի առչիվը
դնի: Տօ, ինչ գուզիս փէշակ տաս, ինչ գուզիս ա-
ռուտուր ասս, մէկը կայ վուր առանց խափիլ եօլա
ըլի տանում իր բանը: Քանի օրինակ գուզիս ասիմ. . .
Հմ, տօ, հացը վուր հաց է, քուչումը ննգած վուր
տեսնում իս, միխկ իս համարում գանա, վեր իս
կայնում, թէ ինչ է, մարթու վուտի տակը չը
ննգնի, կօտէ. չէ վուր սուրփի իս համարում:

Ի՞նչ ասէ՞ք, յայնչ մայ Ե՛ՒՍԱՅԻ, ի՞նչ ասէ՞ք զձեզ
Բաս ի՞նչ է, Ասծու տուրք է: Ես ասեմ ձեզ ի՞նչ

ԿԱՐԱՊԵՏ

Հա՛, ես էլ էտ իմ ասում է. արբա հիմի էն Ասծու
տուրքի ծախօղը ի՞նչ հանգն է խափում միդ: Ալըր
իս ուզում մէ յգնումն, ախպէր, ինչ ասիս մէջը դուս
է դալի. թխած իս առնում կշռումը պակաս ին
տալի. բաս հիմի քու մտքումը հաց թխօղներուն
պիտի խիխտին էլի: Էստու վրայ վաթար խօսմ մէ
կէնիւրն ին ժած դալի: Ամա փէշաքրերուն ու ման
դրում ծախօղներուն թողնինք, ասինք խիղճ մարթիք
ին. խիղճ վուր հաց գոյնայ ուտելու, միսկ չէ,
Կօսէ: Աբա էս քու հարուստնին ինչ ին անում, թէ
գուզ էս քու դրանիցի ապրանք ծախօղնիրը. տես
նինք թէ նրանցմէն վուրն է հալալ առուտուր անում:
Ասում ին երկու շահի շահ առնիրը միսկ է, կօսէ.
Նրանք կի մէ դրօշի կարաքը վեց արասով ին ծա
խում, պօմադա է, կօսէ. . . Ի՞նչ պօմադա, ի՞նչ
փլաւ, ի՞նչ փստան, դիփ խափիլ ու խափիլ. խա
փիլը էստուրը կօսին, թէ գուզիս, չէ թէ ախչիկ
մարթու տալուն. . . Հը, ի՞նչ իս բերանդ բաց արի,
սո՞ւտ իմ ասում:

ԻՍՍՅԻ, ուշի գաղով:

Սուտ կի չէ, զուրթ իս ասում, Գարասիմ Եակու
լի:

Գարգետն նստում էն:

ԿԱՐԱՊԵՏ

Վուր զուրթ իմ ասում, բաս տանին դիփունանցը
խիխտին էլի: Ախչիկ մարթու տալն էլ մէ փէշակ է.

բաս վուրդի ախչկայ տէր կայ, նրանցն էլ հիղը խիխ
տին: Իժում էա ի՞նչ օրէնք կուլի: Միր քախկումը
դրստութենով բան չի շինվի, չէ, թէ գուզ Երդ
նուց հրիշտակ դէվէր գայ. ի՞նչեր իս ասում դուն:
Տօ, հիւու ուր իմ գնում. էս սահաթիս, ասինք,
ինձմէն մէ բան խլեցիր, էլ յիդ չիս տալի, մէ խօս
կով, ինձ արիժատ արիր: Գնում իմ դադաստան
իմ ուզում, ասում ին զավթրի. զավթրէն գնում իմ,
էլի ասում ին զավթրի, էլի իմ գնում, էլի էն
զավթրին ին ասում: Տօ, էս խափիլ վուր չէ, բաս
ի՞նչ դարդուբալ է. բաս խափիլը վունց գուզիս:
Հիմի քու խիլքով չինօղնիկներուն էլ խիխտին դի
փունանցն էլի: Էտէնց վուր ասինք, էս ուր կէհայ,
էլի: Բարեմց ասա, թէ միր քաղաքը մերաշ վեկալ
նին կրակ տան ու պրծնի՛ն. . . Իժում, չունքի քու
մտկումը դուն շատ խտակ մարթ իս, մէնակ քիզ
ամա բօլթա տու ու տեսնիմ թէ վունց իս ասիրում:

ԻՍՍՅԻ

Սուրը վուր փիքը իմ անում, ախպէր, է, զուրթ
վուր դրուստ մարթ խիստ քիչ կայ միր քախկումը:

ԿԱՐԱՊԵՏ

Հա, Իսայի ջան, ես էլ էտ իմ ասում վուր ամէն
բանումը խափում ինք ու խափում ինք: Աւտելումը,
խմելումը, հաքնելումը, մէ խօսկով, նստում ինք թէ
վեր ինք կենում, պարկում ինք թէ ման ինք դալի,
լալիս ինք թէ ծիծաղում, դիփ խափում ինք, խա
փում ինք ու խափում. մինք էլ դիփ խափած ինք
ու խափած: Գլխեմէն ինչըու վուտը սուտ է էս աշ
խարքը: «Նս ասացի ի դարմանալի իմում, ասում է,

Թէ ամենայն մարդ սուտ է,» կօսէ :

ԻՍԱՅԻ

Վայ միւր միակը , էտ խօմ հտէնց է ու հտէնց :

ԿԱՐԱՊԵՏ

Պրծաւ , զնայ . . . Ամա մէ բան էլ ասիմ . . .
գուն չնսիր էս սահաթիս Թէ ակզկատ բանը շինեցի ,
կօսէ . . . վունց շինեցիր , քիզ իմ հարցնում , փտնե-
լով Թի գովելով :

ԻՍԱՅԻ

Հարաթտա վուր գովեցի :

ԿԱՐԱՊԵՏ

Հիմի էտ խափիլ չէ :

ԻՍԱՅԻ

Վա , հէր օխնած , խափիլ էլ կայ , խափիլ էլ .
'ես մէ բաշ գովել իմ , խօմ չիմ փտնի : Ախզկայ գո-
վին ու էգեղեցի շինին , ասում է , մէկ է . ամա
գուն սարքովի բանիր իս դարսում :

ԿԱՐԱՊԵՏ

Բաս գուզն քսան բան ասիմ , վուր գուն ըլիս
սարքովի խափի մարդկերանցը :

ԻՍԱՅԻ

Ե՛հ , լաւ է , քու հօրն օղորմի , ըադրօս էտունը է :

ԿԱՐԱՊԵՏ

Էտէնց այ . . . 'ես քիզ ասում իմ , ինձ մի ջգրե-
ցնի . . .

ՏԵՍԻԼ Ը

ՄԱՐԳՐԻՏ , ԿԱՐԱՊԵՏ , ԻՍԱՅԻ

ՄԱՐԳՐԻՏ , ԴՈՒՐՈՒ ԳՄՈՒԼ ՅՈՒՆ ԴՈՒՆԻՅ :

Մամի ջան , ձիզ ին մնում :

ԿԱՐԱՊԵՏ

Էս նմուտիս գալիս ինք :

Մարգրիտը Դուրս է գնում Յոն Դունից :

ՏԵՍԻԼ Թ

ԿԱՐԱՊԵՏ , ԻՍԱՅԻ

ԿԱՐԱՊԵՏ , վէր կենտուլ , ճեռքը դնում է Բայրոս ուսի վրայ
ու քաշը ջայնում :

Աստուձ գիղենայ , Բայրի , փիս մարթ չիմ : Դուն
լաւ գիղիս վուր ակակտին էլ իմ վուղ տալի , խղձին
էլ իմ օտկում , պասս էլ չիմ կոտրում , ժամեմէն էլ
յիդ չիմ ննգնի իմ օրումը . (Ձեռքը վէրջնում է Բայրոս ,
որը խնդն կոսգնում է :) ամա աչ ու ձախ վուր յիդ
իմ մտիկ տալի , ակպէր , մէկին չիմ տեսնում վուր
ինձ չըլի խափի . 'ես էլ նրանց հիդ էնէնց իմ ժափ
գալի : Հիմի էս խափիլ է . խափիլ կի չէ , խիլք բա-
նեցնել է , խիլք : Բաս ի՞նչնմէն է վուր ասում ինք ,
Թէ ջուրը կու տանէ ու ծարաւ յիդ կու բերէ , կօ-
սէ . ի՞նչի վրայ է ասած էս սնդաղէն , խափելու
վրայ Թէ խիլքի վրայ , քիզ իմ հարցնում :

Գ ԻՍԱՅԻ ԺԶ

Հալբաթաա վուր խիլքի վրայ :

ԿԱՐԱՊԵՏ ԻՍԱՅԻ

Հն, օղորմի քու հօրը : Կուլի Փռանդատուն էս անդազէն խափելու վրայ իմանան . Գրամա միզ ամա խիլք է ցուց տալի , խիլք : Ինչ անիս , ախպէր . Ամիր քաղաքն էսէնց է :

ԻՍԱՅԻ սոյաք սոյառնոս սո

Նա ու իմ հոքին դրուստ իս ասում :

ԿԱՐԱՊԵՏ

Վուր դրուստ իմ ասում , գալիս է էլի իմ ասածը , վուր առանց խափիլ չէ ըլում : Տօ , հիմի Կու ի՞նչով իմ միղաւուր վուր ախպէրն զիղծ է . ամա հալալ վուր ժաժ իմ գալի , օշով վուր չէ ուղում , ի՞նչ անիմ : Ախպէր , քիմէն ինչ թաքցնիմ , ետդ խօժ չիս : (Բայտա աշանջն Տօմէնալու և չայնր ցածրայնելու :) Նրիք ջեր անդղիլ ին ու թողիլ ին , Ատոււձ գիղեհայ : Հիմի հազեր էդ տղէն տեսիլ է մէկ ու հաւնիլ , աօ , բի է , էդերա Ատոււձ խռովի ու նշանն էլ ապ է :

ԻՍԱՅԻ

Լաւ իս ասում , Գարաթիմ Նակուլիչ ջան , ամա , օրինակ ասիմ , բերի ու բանը գլուխ չէկաւ , էս խօժ ախչկատ բողազը գոն կորվեցաւ սաղ աշխարհումը :

ԿԱՐԱՊԵՏ

Տօ , քիզ ինչ , իմ ապրանքը չէ . վիէ :

ԻՍԱՅԻ

Ինչ իմ հոքում , ախպէր . վունցոր կօսիս , էնէնց կու ժաժ գամ , միխն ու վարցիլը քու շնքին :

ԿԱՐԱՊԵՏ

Օղորմի քու հօրը : էտէնց ասան ու պրծի : ԻՍԱՅԻ

Բաս հիմի հոքեմէս ձեռը վիկալնիմ ու խափով բերիմ , էլի :

ԿԱՐԱՊԵՏ

Արի ու գիլի գլխին աւետրան կարթայ . դրուստ խիլքի ախկատ է էս հէր օխնածը : Տօ , հոքեմէս ձեռն ուր իս վիկալնում , եա խափով ուր իս բերում : Դուն էն տղին աղաւարի ասան իմ մապիէր , թէ համեցէք , ախչկատ վունցոր գուզիս տիս իմ տանը , օշով էլ չի ըլի ասան . թէ հաւնի ուղէ , ախպէր , թէ չէ , նա իր համա , իմ ապրանքն ինձ ամա : (Ատանջն :) Թէ մէ վուտը կու տուն դնէ :

ԻՍԱՅԻ

Նա , էտ օրինաւուր իս ասում , Գարաթիմ Նակուլիչ . հացը ուտինք , էս սահաթիս էւէտ գնամ :

ՏԵՍԻԼ Ժ

ՆՐԱՆՔ , ՆԱՏԱԼԻԱ

ՆԱՏԱԼԻԱ , գորսս գալով չախ գրանից և ասանջին : Քն , իմ բանը չըլի հէքիաթ անում :

Մօտէնամ է և ծածուկ աշանջ է դնում :

ԿԱՐԱՊԵՏ

Ձիւ մէ զօզրումը չը նստեցրի : (Բայտա :) Ինչ իմ ասում , Բայի , թէ բանը դժարացաւ , մէ իմքին էլ աւելցու , ջհանդամը նրա գլուխը , հիմի վուղ շատ

ունիմ, ու ասա էլ թէ էս գիշեր չի գայ, էքուց ուզում իմ Կօջօրինց տղին տայ. խօսած ինք ու բանը քութահ արածի պէս է:

ԻՍԱՅԻ

Իժուժ ի՞նչի վունչիչ չէիր ասում:

ԿԱՐԱՊԵՏ

Էսօր առուտեհան իմ խօսի, հէր օխնած, վուրդի էի ասի:

ԻՍԱՅԻ

Ափսուս չէ՞ իմ ասած տղէն:

ԿԱՐԱՊԵՏ

Վուր ափսուս է ու շինէ էլի. քու լաւութիւնն էլ կու վջարիմ:

ԻՍԱՅԻ

Էս սահաթիս էւէտ. մէ թիքա հաց ուտիմ ու գնամ: Վէս սահաթումը խաբար բերիմ քիզ ամա:

ԿԱՐԱՊԵՏ

Աբա, Իսայի ջան, ժած ու մած արի:

ՆԱՏԱԼԻԱ, ուրախ:

Իմացայ, իմացայ, իմացայ...

Կարապետը և Իսային պարհայած յէր են նայում

և հնում են աղշած:

ԿԱՐԱՊԵՏ, վախեցած:

Ի՞նչ իմացար:

ՆԱՏԱԼԻԱ, ժպտալով:

Վուր Մարքրիտին նշնում իք:

ԻՍԱՅԻ

Տօ, ինչ սատանէք ին էս կնգգիրբը:

ԿԱՐԱՊԵՏ

Ո՛ւժ վրայ ինք նշնում:

ՆԱՏԱԼԻԱ, ժպտալով:

Վա՛, դուք էիք խօսում, էս ի՞նչ գիրդիմ:

ԿԱՐԱՊԵՏ

Բաս վունչիչ չիմացար թէ ով է...

ՆԱՏԱԼԻԱ

Աստուճ գիրդենայ, վունչիչ. հէնց էս սահաթիս տունն էկայ վուր ասիք՝ թէ նա չի ուզի, Կօջօրինց տղէն հաղիր է, կօտէ: Ո՞վ է, ձիա ջան, գէթաղվա:

ԿԱՐԱՊԵՏ, սատանչին:

Վունչիչ չէ իմացի:

ԻՍԱՅԻ, Նարայիտյին:

Թէ էս սահաթիս չիմացար, չի ըլի քու բանն այ:

ՆԱՏԱԼԻԱ, Իսայուն:

Գէնացվալէբի, Իսայի ջան, ասա՛, ո՞վ է...

ԻՍԱՅԻ, սատանչին:

Արի ու հիմի սրան դնջացու:

ԿԱՐԱՊԵՏ, Նարայիտյին:

Նա իժուժ կօսիմ քիզ, Նատալիա ջան, ամա Մարքրիտի մօդ վունչիչ չը գիրդենաս. գնանք ջեր հաց ուտինք: (Գնում են դէպի շախ: Կարապետը Չերադատանում է և վերջնելով գլխարկը, սատանչին:) Աբա՛, Իսայիսիմ Նակուլիչ, հիմի դուն գիրդիս: (Նարայիտյին և Իսայուն:) Վա՛, համեցէք է:

Իսայուն էս գնում շախ դռնից, Չերադոյրն իջնում է:

ԵՐԵՐՈՒՆԾ ԵՐԿՐՈՐԴ

Հասարակ սենեակ Մասիսեանցի տանը երեք դռնով՝ աջ, ձախ եւ մէջ տեղը : Ձախ կողմում դրած է գորգով ծածկած եւ մոծաքաներով զարդարած տախտ, իսկ աջ՝ սեղան, որի վրայ դարսած են մի քանի դրեանք : Բեմի խորքումը եւ սեղանի մօտ ամուսներ :

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԳԷՈՐԳ, ԹԵԱՆԷ, ԲՆԱՆԿՆԱՅԻՆ, սեղանի Տօք կանգնած է :

Զարմանալի բան . յանկարծ պատահեց եւ նորա տեսքը բաւական էր ինձնից բնական հանգստութիւնս խելը : Նորա զեղեցիկ դէմքը, նորա կրակոտ աչքերը, նորա այն մեղմ-սիրայիւր ձայնը ինձ բռն լրրովին զբաւեցին . . . Գեղեցկութիւն, ուսում, հարստութիւն, այդ բոլորը կայ, բայց աղջիկը ի՞նչ աղջիկ է, ի՞նչ հասկացողութեան, ի՞նչ բնաւորութեան տէր է. ի՞նչպէս իմանամ . . . Ա՛խ, այն ի՞նչ սովորութիւն է, որ օտար աղջկայ հետ խօսել եւ ծանօթանալ չէ լինում . . . Ձէ, ի՞նչ կամենան թող ասեն, իսկ ես մինչև լաւ չը ճանաչեմ, (Աջ չեառով ճակատից եբբի մէջ Բան է պոչում եւ հետո-

Գրո՛ւմ :) մտքիցս հանում եմ եւ դէն եմ գցում . . . Այո՛, այո, վերջացաւ . . . Այս բանի վրայ այլ եւս չեմ մտածի . . . (Նստում է եւ շուտ-շուտ հարբում, յանկարծ փերչը Գրո՛ւմ է սեղանի վրայ :) Ոչինչ չեմ հասկանում . . . Մտքիցս չէ հեռանում այն աղջիկը . . . Ի՞նչպէս վախեցաւ խեղճը . . . Ի՞նչպէս դողալով ասաց՝ « ա՛խ Աստու՛ճ, ինձմէն ի՞նչ է ի՞ք՝ կամենում . . . » Պէտքէ վերջ դրած այս վրդովմունքիս, պէտքէ մի կերպիւ ծանօթացած նորա հետ . . . բայց ի՞նչպէս :

Նստումս Խորը մտածումս մէջ է ընկնում, գլուխը զիջում է ինչ-որ բանի : Մտքիս մէջ ինչ-որ բան է ծառայում զիջելու : Նստիցս արագ-արագ

ՏԵՍԻԼ Բ

ԳԷՈՐԳ, ՔԵԹԵՒԱՆ . . . ՔԵԹԵՒԱՆ, ԳՈՒՄԱՅ գործելով դուրս է գալի շտի պատնից . . . ինչ իս խուրը փիքը անում, վաւրթի . . . ուղղում իս իմանայ թէ վիշի ծէրն ով է սրի :

ԳԷՈՐԳ

Նա՛րուստ ասեցիր, դէդի, որ խուռն իմ փիքը անում : ՔԵԹԵՒԱՆ

Գէդէտ տանէ ցաւդ, վաւրթի . ի՞նչե իս անմիջ նիղանում . աշխարքն էտէնց եկիլ է ; էտէնց կէհայ . մէնակ դուն խօմ չես երգբումը :

ԳԷՈՐԳ, ՎԵՐ ԿԵՆԱՅՈՎ :

Ել այդ բանի վրայ չը խօսենք, թէ ինձ կը սիրես :

ՔԵԹԵՒԱՆ

Ի՞նչի, վուրթի, ի՞նչի չը խօսինք, գէնացվայօս գէգէն. փիս բան խօմ չիմ ասում, չէ՞ վուր քու լան իմ ուզում. . . Ախչիկն օրինաւոր ատչիկ, լաւ մարթու վուրթի, սիրուն վուր ասում իս հատը չունէ, ուսում առած ու էն զաղա փուղ ու բաժինք, ուրիշ էլ ի՞նչ իս ուզում: Կիսին էլ արժանի չինք, քու արիւր:

ԳԷՈՐԳ

Գիւի շատ լաւ, բայց աղջկան որ չեմ ճանաչում. ախար մէկ տեսնելով ի՞նչպէս ուզեմ: Այս ի՞նչ երկիր է, Տէր Աստուած. ո՞վ գիտէ ինչ աղջիկ է:

Նստում է եւ ծխախոտ ծխում:
ՔԵԹԵՒԱՆ

Դուն պրծնիս ամէն ցաւեմէն, վուր էնէնց սիրունութիւնը չին գովում էն ախչկանը, վունցոր խասիաթը. երնէկ չի ըլի քի պէս մէ՛նս էլ տեսիլ ըլիմ ու հիդը խօսիլ, վուր ուփրօ դրուստ խօսիմ. ամա ի՞նչ անիմ, վուր երէզվան դէան իմ իմանում թէ աշխրբումը Ձամբախինց ախչիկ էլ կայ:

ԳԷՈՐԳ

Լաւ . . . ուրեմն ի՞նչ է, աչքերս խփած գնամ ջուրն ընկնեմ:

ՔԵԹԵՒԱՆ

Էն օրը մահ ըլի Քեթեանի գլխին. էտ վունց իս ասում, վուրթի:

ԳԷՈՐԳ

Այդպէս է դուրս գալի, ուրիշ ի՞նչ ասեմ:

ՔԵԹԵՒԱՆ

Ի՞նչի, վուրթի, աշխարքը հարց ու փուրցով է: Իսայուն կու ճանչնաս, դուն իս ասում թէ սուտ խօսիլ չի գիդի ո՞ւ. մէ կունէն էլ միր ասկականիրը դիփունքը խէիրաթ ին տեսնում: Մէ իմ քուր Խամ փերուն չեմ տեսի, նա էլ յօրէս գու քայ, ապապրիլ իմ, նա դիփունանցը կու ճանչնայ:

ԳԷՈՐԳ

Է՛հ, մէկ դրուստ խօսողն էլ նա է:

ՔԵԹԵՒԱՆ

Ինչոր գուզէ ըլի, էլի մէ իմքին կու իմանանք ու էտումէն դէնը խիստ շատ հարց ու փուրցն էլ լաւ չէ, վուրթի: Ո՞վ գիդէ, էգէբա դուշման էլ ունենանք, կուլի զասիդի էլ քարուքանդ անին բանը. Խաչը գիդենայ, շատի ջեգրն էլ է գալի, վուր քիզ էտ զաղա փուղ ին տալի:

ԳԷՈՐԳ, վեր կենայով:

Է՛հ, դէդի ջան, փողի անունը որ չը խաղար այս գործի մէջ, աւելի լաւ կը լինէր, հաւատա ինձ: Ես կարծում եմ որ հէնց այդ փողն է շշկլացնում մեզ ամենքիս . . . (Ինձի մի ծայրից միտն է անցնում:) Ես յաւիտենական ընկեր եմ ուզում ինձ համար, փողի պատճառաւ դուրսս խօ չե՞մ ծախի:

ՔԵԹԵՒԱՆ

Ի՞նչի իս փուղի խաթիր գլուխը ծախում, վուրթի. ննգիրտ էլ վուր լան ըլի ու փուղն էլ շատ, բօղազիտ կու կանգնի: Ձեր ջէհէլ իս, վուրթի. լաւ գիդացի վուր ասանց փուղ օջով օջովի ախչկան չէ ուզում:

ԳԷՈՐԳ, Կանգնեցող Տօր սուտը:

Ուրեմն ի՞նչ կը հրամայես, մէկ ասան: ԲԵԹԵՒԱՆ
Ի՛նչ պիտի հրամայիմ, վուրթի. Աստրճութիւնը
նաստ է բերի, մէկ տեսիլ իս, հաւնիլ իս, էլ ի՛նչը
պիտի տեսնիս: Հէնց գիղիս վրայ ու վրայ անդղելը
լաւ բան է, մէկ էլ տեսար անկող խափս էրիտ ու
բանը մօշլա էլաւ. էս իսո՞ ախչկայ բողաղը դուս
կտրվեցաւ, զնանց արուստ մահացու միխկ կուլն, քու
արիւր. ով գիղէ իժուամ խղճի գլխին ինչ գայ . . .
Ձէ, չէ, վուրթի, դուն իմը լսէ, յօրէս Իսային գու
քայ, էրէսդ խէչը հանէ ու զնն գէմ ու գէմը նշա
նը տու: մանչար պղծի, յիլը ին: յիլը տի, յի

ԳԷՈՐԳ, Կայրայած: ար յիտ, զնամ

Որ սպանես էլ, գէղի, չեմ կարող, մինչև գոնէ
մէկ անգամ էլ է հետը չը խօսեմ և նորա խօսակ
ցութիւնը չը լսեմ, բոլորովին չի լինի այդ բանը,
թէ և մէկ միլիօն էլ տան:

ԲԵԹԵՒԱՆ

Թէ ասում իս վուր հիղը խօսիլ էլ իս, ուրիշ ի՛նչ
պիտի խօսիս: Գիղենաս վուր էտ էլ մէ մինձ բախտ է,
վուր էտէնց ուստ է էկի. հաղըէնը մէկին չի պա
տահի էտէնց:

ԳԷՈՐԳ

Ե՛հ, այն ինչ խօսելու հաշվումն էր: — Խօսել ե՞ս:

ԲԵԹԵՒԱՆ

Ի՛հ, լաւ է, գէնացվալօս գէղէն, սիրտս մի՛ շուռ
տա. արա էտ խօսկ է վուր դուն իս ասում: Նշնե
լու ախչիկը վուր գիղենայ թէ իրան պիտի ուզես, էլ

իր ձէնը կու իմաց անէ քիղ:

ԳԷՈՐԳ

Եթէ նա էլ այն աղջիկներին է, որ ինձ հետ խօ
սակցութիւնը պէտք է սկսի միայն հարսանիքի միւս
օրը, թող չը նեղանայ, ես նորա ուղողը չեմ . . .
Մէկ տիկինի պէս բերեն, նստացնեն կողքիս և ամ
բողջ ժամերով լուռ ու մունջ մնայ, իբրև թէ վայ
տի կտոր է, միայն գէմքն ունենայ մարդու, ուրիշ
ոչինչ: — Օրիորդ, հաց կամենում էք: (Ներհայայնեղով
Երեսնայայն օրերսին, գլուխը Բայասայն շարժում է:)
— Օրիորդ, ջուր կամենում էք: (Նոյն խոսքը:) — Ու
րեմն ի՛նչ էք կամենում, օրիորդ: (Աչքերը վայր Բող
նեղով, Երեսնայայն օրերսին պէս ուղղում է:) Ես կը
տրտաքիլիմ խօ: (Բէլեանը ծիծաղում է:) Միծաղելի:
Տասն անգամ լաւ է ինձ խեղտելու տանեն, քան թէ
այդպիսի բանի հանդիպեմ: . . . էլ ի՛նչու համար է
նորա ուսումը, եթէ իրաւի ուսում առած է, ինչպէս
Իսային ասում է:

ԲԵԹԵՒԱՆ

Ինչ գուզէ ուսում առած ըլի, վուրթի, միր հաու
նամուսավուր ախչիկն ուրիշ է:

ԳԷՈՐԳ

Ե՛հ նամուս: Միթէ նամուսն ու ամօթը նորա
նումն է, որ մարդ մարդու հետ չը խօսի: Այսպիսի
էլ ժողովուրդ կը լինի՞ աշխարհիս երեսին. հագուստը
նոր, կերակուրը նոր, շինութիւնները նոր, մօզա
նները նոր և նոր. իսկ հասկացողութիւնը էլի էն,
էլի էն, էլի էն . . . Մարդ կը գժվի այստեղ ճմա
րիտ:

ՔԵԹԵՒԱՆ, հեղափոխ :

Ել քու գլուխ չունիմ, գնա ինչ գուզես արա . . .
Վի՛Տ, գէնացվա՛ն :

ԳԵՈՐԳ

Փառք Աստուծոյ, հէնց դորանից պէտք է սկսե-
իր . . . (Նստում է ձեռք չհռչիս) Դու մէկ երկու շա-
բաթ համբերիր, դէզի . ինչպէս և լինի ես անպատ-
ճառ կը ծանօթանամ այն աղջկայ հետ և այն ժա-
մանակ կը տեսնենք :

ՔԵԹԵՒԱՆ

Ախ, վուրթի, ի՞նչիւր իս ասում, ախար քի մօդ
օրթում չը կերաւ էրիգ Իսային, վուր չուրս հինգ
տանեմէն գօուած ուզում ին էն ախչկան . . .
Ինչ աղանչաք պաղանտաքով կոտրիլ իմ, վուր էս էր-
կու օրը մուլափ տան . . . Խիլք ունիս ձեռնեմէդ մի
թողնի, թէ չէ վերչը դառ ու դարդակ կու նստիս,
Աստուծ պիղենայ :

ԳԵՈՐԳ, վեր կենալով և բարկացած :

Ում ուզենան, թող տան, էլ ես կին չեմ ուզում
բոլորովին . . . Ոսս կոտրվել էր և երեկ այն թաղովը
չէի անց կացել : Մարտիրոսեանցի տուն չը դառաւ
ինձ համար, ցաւ դառաւ էլի :

ՔԵԹԵՒԱՆ, երկար լռութենից յետոյ :

Ե՛հ, վուրթի, ջէհէլ օրս խաւրեցրիլ իմ քիզ ամա,
ու՛մբբս սիվցրիլ իմ, գիշեր ցերեկ լինքառ ու երգէնքդ
չափել իմ, բերիլ իմ մարթ իմ շինի ու վերչը՝ մէ
քու թագին ու փսակին էլ չիս արժանի անում ի՛նձ :

ԳԵՈՐԳ

Ախ, դէզի, վերջացրու թէ Աստուած կը սիրես :

ՔԵԹԵՒԱՆ

Ետէնց կուլի, վուրթի, հալբաթ իմ ճակտին էտ
էր գրած, վուր էլ լաւ օր չը տեսնիմ :

ԳԵՈՐԳ

Օ՛հ, Աստուած . . .

ՔԵԹԵՒԱՆ, աչքերը սրբէլով :

Չարչարանքով ասրիլ իմ ու մեռնելիս էլ քու
դարդը պիտի տանիմ հիզս, վուրթի :

ԳԵՈՐԳ

Ել չեմ կարող դիմանալ . . . (Բարկացած գնում է
մինչև աջ դուռը, յետոյ վերադառնում է) Դու գիտես որ
ես քեզ շատ եմ սիրում, դէզի . կեսնքս չեմ ինա-
յիլ քեզ, եթէ հարկաւոր լինի . բայց այս գործը
քո գործը չէ, դու իզուր ես նեղանում . . . Օ՛հ,
գլուխս սկսեց ցաւել ճշմարիտ . դուրս գնամ մի փոքր
ման գամ :

ՔԵԹԵՒԱՆ, վեր կենալով :

Գնա՛, վուրթի, գնա . օղունդ քու գլուխը չը ցա-
ւի, թող իմ գլուխը քիզ չարի փուխ ըլի :

ԳԵՈՐԳ

Ախ, իմ բարի, իմ քաղցր դէզի ջան, քո երախ-
տիքը ես երբէք չեմ մոռանայ, ես քեզ շատ եմ պար-
տական . . . (Ժպտալով) Մի վախենար, դէզի, դու
իմ թագը շուտով կը տեսնես :

ՔԵԹԵՒԱՆ, գրչում է ԳԵՐԳԷՆ :

Գէնացվալօս դէզէն, վուրթի :

Պատիկ :

ՏԵՍԻԼ Գ

ՆՐԱՆՔ, ԻՍԱՅԻ

ԻՍԱՅԻ, Տոնելով Տեղի դասերը :

Բարի իրիզուն ձիզ :

ՔԵԹԵՒԱՆ

Ասծու բարին, պարուն Իսայի :

ԳԷՈՐԳ

Բարև, Իսայի :

ԻՍԱՅԻ

Փառք Աստծու, մէ դէզա ու վուրթի տեսայ էլի մէկսմէկու փաթըթած. էրևում է Ասծու աճկը չէ չիռացի միր քախկեմէն :

ՔԵԹԵՒԱՆ

Հա, իմ վուրթին ինձ խիստ է սիրում: Համեցէք նստի, Իսայի ջան :

ԻՍԱՅԻ

Լաւ տղայ ունիս, դէզի ջան, Աստուձ զօրացնէ : (Գէորգին :) Աբա, Գիօրգի ջան, ի՞նչ իս տալի, վուր քիզ ուրախացնիմ :

ԳԷՈՐԳ

Էլի նօր բան կայ :

ԻՍԱՅԻ

Նուրն էն է, վուր Գարասիմ Եակուղին էկիլ է, ուզում է քիզ տեսնի :

ԳԷՈՐԳ, պարհայած :

Նա այստեղ . այ բան . . . Գնա, ասա շնորհ բերէ, ինդրեմ :

(Դուրս է գնում աջ դասերը :)

ՏԵՍԻԼ Դ

ՔԵԹԵՒԱՆ, ԻՍԱՅԻ

ՔԵԹԵՒԱՆ

Ո՛ւր է թարժած էլի, դէնացվալէբի :

ԻՍԱՅԻ

Ա՛յ, դէզի ջան, էլախտ էն քու պարուն տղէն ինձ կորականն ասաւ, վուր ինչըու Գարասիմ Եակուղին չին չը ճանչնենամ, նրա տուն վուտս չիմ կանա դնի, կօսէ. Ես էլ յիդ ասի : Ուզում էի տանս մէ լաւ ճաշ սարքի, վուր է մէկսմէկու ուստ բերիմ. ամա չունքի շտապով բան է, էն խիդձ մարթը մէ բաշ դրակը վիկալաւ ու էկան. ճամփին դիփ էն էր ասում՝ թէ խունարութիւնը Ասծու դուրէկան բան է, կօսէ, ու չիմի դուսը մնում է :

ՔԵԹԵՒԱՆ

Վո՛ւյ իմ աճկին, դուան ո՛ւր իս թողի :

ԻՍԱՅԻ

Տուն էկայ վուր զօկըդ անիմ :

ՔԵԹԵՒԱՆ

Գնա չուտ, Իսայի ջան, խնդրէ վուր շնուր բերէ. ամութ է, ի՞նչ կօսէ էն մարթը :

ԻՍԱՅԻ

Էս սահաթիս :

Դուրս է գնում Տեղի դասերը, իսկ աջից Տոնում

է Գէորգը աւուրեւում :



ՏԵՍԻԼ Ե

ՔԵԹԵՒԱՆ, ԳԷՈՐԳ

ԳԷՈՐԳ

Ձեռ գարմանում, դէզի:

ՔԵԹԵՒԱՆ

Աբա, վուրթի, տիս ինչ խունար մարթ է էլի:

ԳԷՈՐԳ

Շատ լաւ, բայց այդ ի՞նչ է նշանակում:

ՔԵԹԵՒԱՆ

Բախտն էկիլ է, դրանդ չոքիլ է, վուրթի:

ՏԵՍԻԼ Զ

ՆՐԱՆԲ, ԿԱՐԱՊԵՏ, ԻՍԱՅԻ

ԿԱՐԱՊԵՏ, հանելով ձեռն արանից:

Բարի իրիզուն ձիգ:

ՔԵԹԵՒԱՆ

Ասծու բարին, համեցէք:

ԻՍԱՅԻ, որ հետեւում էր Կարապետին, առաջ է գալի:

Այ, դէզի ջան, էս է իմ ասած մարթը, էս էլ, Գարասիմ Եակուլիչ, իմ զոված տղէն. էլ անումն ու ասին ինչ ասիմ, խօսմ դուք էլ լաւ գիդիք:

ԳԷՈՐԳ, առաջ գնալով, Կարապետին չեռս է դառնի:

Շատ ուրախ եմ . . . Նստեցէք խնդրեմ:

ԱՆՈՒՆ Է ԱՌԱՋԱՐԴՈՒՄ:

ԿԱՐԱՊԵՏ

Շատ ապրիս, վուրթի, (Աջ ու չափ նայելով:) ամա համարցակութիւնս բախշեցէք, վուր դէմ ու դէմն էկայ, ձիգ թարժած արի:

ԳԷՈՐԳ

Ինչ էք հրամայում, պարոն, դուք մեզ բողբոլին պարտաւորեցնում էք: (Անուշ ցոյց դնելով:) Հրամայեցէք խնդրեմ:

ԿԱՐԱՊԵՏ, ՔԵԼԽՈՒՄԻՆ, նստելով:

Նիղութին չը տամ ասի, իմ քուր . . . վա՛, համեցէք է՛:

Ամենքը նստում էն՝ Քելխումնը աստիտի վրայ, ինչ մասները ուղտաների վրայ, այնպէս որ Կարապետը գործում է Քելխումնի ու Գեորգի մէջ, բայց արանից չափ ու ժոյր ինչ հետեւ Իսային:

ՔԵԹԵՒԱՆ

Էտ ինչ խօսկ է, պարուն, վուր դուք ի՞ք հրամանք անում: Դուք բախշեցէք իմ տղին, վուր ինչքու էտի նիղացրուց ձիգ:

ԳԷՈՐԳ

Իմ մայրը մի փոքր սխալվում է, պարոն. ես բողբոլմին միտք չունէի ձեզ այդքան նեղութիւն տալու, բայց և շատ ուրախ եմ որ ձեզ մեր տանն եմ տեսնում այժմ և միջոց եմ զտնում ձեզ հետ ծանօթանալու:

ԿԱՐԱՊԵՏ

Ապրիս, վուրթի, ապրիս:

ԻՍԱՅԻ

Աբա, Գարասիմ Եակուլիչ, սուտ էի: ասում վուր

գիղուն է :

Գեորգը հեգնօրէն ծիծաղով գնում է սեղանից
Լաշինակի վերջնէլը :

ԿԱՐԱՊԵՏ

Իմ թամահուլիսն էլ դրա ուսումն է, Իսայի,
թէ չէ դուն լաւ գիղիս ուղղիս շատ կան : (Գե-
լեհանին :) Շատ լաւ տղայ իս ունեցի, դէղի ջան,
խիստ էլ գովում ին . . . Հէրն էլ լաւ մարթ էր,
օղորմած հոգին . . . իմը լաւ բարեկամ էր . . .
Տայիվ վուր վաղ փչացաւ :

Քեթեիւն, երէտը հոգոյ հանելով :

Ե՛հ . . .

ԿԱՐԱՊԵՏ, շարունակելով :

Ամա էլի փառք տու Աստուծոն, դէղի, վուր էս
հանգի մխիթարութիւն է թողի քիչ ամա : (Գեոր-
գին, որ վերադարձում է իր գեղը :) Շատ ապրիս, վուր-
թի, շատ . . . Իմացոյ վուր մօրդ պատիւն էլ չիս
մոռանում. Իսային ասաւ հիմի :

ԳԷՈՐԳ

Նս միայն իմ պարտականութիւնն եմ կատարում
դէպի ծնօղս :

ԿԱՐԱՊԵՏ

Զօրանաս, վուրթի : Հօրն ու մօր պատիւ տալը
Աստու պատուիրանք է :

ԳԷՈՐԳ

Ի հարկէ :

ՔԵԹԵԻԱՆ

Աստուծ քու վուրթ կերանց պատիւն էլ անպակաս
անէ քիմէն :

ԿԱՐԱՊԵՏ

Էտ ասա, դէղի ջան. սէրն ու պատիւն անց էլ
ի՛նչ պիտի տան միզ միր վուրթիքը : Ե՛հ, փառք
Աստու, դարթնի մէ ախչիկս մնացածնիրը ջեր
էրէլէրք ին. ամա ումիկ ունիմ Աստուծէն վուր նրանք
էլ իրանց մինձի պէս խուճար ու պարկիշտ դուս
կանգնին :

ՔԵԹԵԻԱՆ

Աստուծ քիչ բախշէ մինձիս էլ ու պտըկնե-
րուտ էլ :

ԿԱՐԱՊԵՏ

Աստուծ սրան էլ (Գեորգի վրայ յոյս պտուղ) քիչ
բախշէ : Ղուրթ է, ջեր իրան լաւ չիմ ճանչնայ, ամա
շատ խելօք է ժած դալի :

ԳԷՈՐԳ

Օ՛հ, պարոն, ես այդքան գովասանութեան արժա-
նի չեմ :

ԿԱՐԱՊԵՏ

Բաս ո՞վ է արժանի, վուրթի, վուր դուն չիս :
(Քեթեիւնին :) Քու արիւր, քէփս էկաւ վուր Իսային
ասաւ թէ հնդուր չէ գալի ինձ մօղ, վուր ջեր ինձ
չէ ճանչնում . . . Նս էլ իմ մակումն ասի, թէ չուն-
քի սա լայիղ չէ անում ինձ մօղ գալը, ես կէհամ :
Աւետարանի խօսկը կատարեցի, վուր ասում է թէ
«'Լ ով որ իր անձը կու խոնարեցնէ, ասում է, նա
բարձրացուցանէ իր հոգին, » կօսէ :

ԻՍԱՅԻ, ԳԵՈՐԳԻՆ :

Տիս ինչ մարթ է :

ԿԱՐԱՊԵՏ

Վաղ խօսք չիմ ժաժ էկի, վուրթի, վուր էկայ:

ԳԷՈՐԳ

Ընդհակառակն, պարոն, մեզ յատուկ բախտաւորեցրիք ձեր գալովը, բայց ի՞նչու էք կարծում որ, ես արհամարհեցի ձեր տունը. իբրև անծանօթ դժուարանում էի դալ:

ԿԱՐԱՊԵՏ

Խիստ դրուստ իս ասում, վուրթի. ամա դէմ ու դէմը խօսինք, ի՞նչ իս ուզում ինձմէն, մէ ասա հէնց ապրիս . . . Ախչկաս տեսիլ իս, հաւնիլ իս, հիմի զնակօմիտ էլ իս ուզում . . . ջուխտ աճկիս, 'ես թաքցնելու ապրանք չունիմ:

ԳԷՈՐԳ

Շատ շնորհակալ եմ, Գարասիմ Յակուլիչ: Ճշմարիտն ասեմ, ես ձեր և ձեր աղջկայ մասին շատ գովասանքներ եմ լսել . . . (Իսպիսի ստանցին երեսը խաչ է հանում:) և կարելի է մեր ցանկութիւնները կատարվին, եթէ ի հարկէ մենք միմեանց հաւաններ:

ԿԱՐԱՊԵՏ

Քու բանը դուն գիտիս, վուրթի, ամա իմ աղջկեր վունց չի հաւնի քիզ:

ԻՍԱՅԻ, ստանցին:

Վահ, ջանն էլ չի վազի:

ԳԷՈՐԳ

Այդ յետուայ բան է, Գարասիմ Յակուլիչ:

ՔՆԹՆԻԱՆ

Ել մի էրզարացնի, վուրթի. ամութ է, քու արիւր, էս պատուական մարթուն էլ էս զաղա նի-

ղացնում իս:

ԳԷՈՐԳ

Ա'իս, մայր . . .

ԻՍԱՅԻ

'ես ու իմ հոգին դրուստ իս ասում, դէդի ջան:

ԿԱՐԱՊԵՏ

Ձէ, ինչի, դէդի ջան, շատ լաւ է խօսում քու տղէն. ախչկա էլ սրա հանգն է մինձացած ու բախտաւոր է, վուր սրա պէս տղի է ռաստ գալի . . . Երևում է վուր իր համա ննգիր է պտտում, չէ թէ փուղ ու բաժինք:

ԳԷՈՐԳ

Շատ ուղիղն էք հրամայում, պարոն. փողի համար ամուսնանալը, իմ կարծիքով, շատ անվայել բան է:

ԿԱՐԱՊԵՏ

Ախար իմացիլ էի էս հանգի տղայ է, վուր 'ես էլ էսէնց զայիմ իմ կպի է . . . Աստուձ զիդենայ, դէդի, 'ես մէնակ փեսութենով չիմ ուզում սրան . . . Աշխրքի բան ու գուրձ ունիմ. վուրթիքս, էլախտ էլ ասի, պատրկնիր ին ու քաղաքը էսէնց է դառի վուր էլ օջոխու աւտալ չէ ըլում . . . Սրա զայամը թանգ աժէ ինձ ամա, դէդի . . . Իմ կայինքին 'ես չիմ կանացի աճկը հասցնի, թող սա կառավարէ. միթամ իրը չի ըլի, թէ ինչ . . . Արի, վուրթի, արի, չէ թէ մէ անգամ, տասն անգամ. հիդը նստի էլ, վիկացի էլ, գուզիս հայերէն խօսի հիդը, գուզիս ռսերէն. փռանցուցեվար էլ իմանում է, ամա ջեր համարցակ չէ կանացի. պօրտուպիանը խօս, մէ պօլ-

կէք ու վալցիր կօծէ, քու արիւր, վուր քէփդ գու
քայ: Աշխրքի փուղ իմ մխտի վրէն. ջեր ծավրի
պէնցիօնուժը, իժուժ տանը: Արի, էսօր, էքուց,
էլըր, եփոր մէ խօսկով քէփդ տայ, գուղիս մէ շա-
բաթ, գուղիս էրկու շաբաթ. թէ հաւնիս նշանը
տո՛ւ, վուրթի, թէ չէ ու՛ դուն քիզ ամա, իմ
ախչիկն ինձ ամա:

ԳԷՈՐԳ

Դուք ձեր խօսքերով ինձ բողբոլովն զբաւում էք,
Գարասիմ Նակուլիչ. իմ խնդիրն էլ հէնց այդ է.
ԻՍԱՅԻ

Թէ ասում էիր, Գարասիմ Նակուլիչ, վուր թէ
էս մէ երկու օրումը չե ըլն, թող խակի էլ չըլն,
կօսէ, ախչկաս անումը չը կոտրվի, կօսէ, ու հիմի
էրկու շաբաթ վաղա էլ իս տալի՞. ախար ինձ սուտ
մի՛ դուս բերի սրանց մօդ է՛:

ԿԱՐԱՊԵՏ

Սուտ ի՛նչի իս, ախպէր, իմ խօսկն է՛ թէ էս
օրերումը բանը չի վերչացնի, էլն վուր չէլած է
ու չէլած, ու թէ շուր կու բերէ ու ախչկաս
էլն էնէնց կու հաւնի, վունցոր մէկ հաւնիլ է, ի՛նչ
իմ հօքում, եփոր ուղենայ էն չախը նշանը տայ...
Վուր իմ ապրնքեմէն ումիկ չունենամ, խօս էսէնց
էլ չիմ ժաժ դա:

ԳԷՈՐԳ

Յատուկ պարտաւորում էք ինձ, Գարասիմ Նակուլիչ:

ԿԱՐԱՊԵՏ

Ինչ ասի, արխային կացի, վուրթի ջան, փեօայ
ջան:

ԳԷՈՐԳ, Ժպտում:

Է՛հ, պարոն, դեռ վաղ է ինձ փեօայ կանչելը.
այդ շատ հեռու գնացիր:

ԿԱՐԱՊԵՏ

Բաս ի՛նչ իս, վուրթի, վուր փեօայ չիս. դուն
հէնց գիղիս, թէ հիմի պիտի դառնաս իմը փեօայ:
Ձէ, վուրթի, էս բանը մարթու բան չէ, երգըն-
քումն է շինվում:

ԻՍԱՅԻ, նայելով դէպէ երջնայ:

Մեռնիմ նրա զօրութենին:

ԿԱՐԱՊԵՏ

Աստձու կամբը վուր չէր ըլն, վուրթի, էրեդ իմ
ախչկան չէիր ուստ գա քուչումը:

ԳԵԹԵՒԱՆ

Փուխ էհամ նրա օղորմութենին:

ԻՍԱՅԻ, կարապէտին:

Վո՛ւնց թէ քուչումը, թէ կօսէ դրանն է տեսի:

ԿԱՐԱՊԵՏ

Հա, իժուժ իմացայ վուր մօդիկ մաղաղիւմն է
էլն իր դէղիղի հիդ:

ԳԷՈՐԳ

Ձէ, ես նորա հետ միայն մէկ փոքրիկ ծառայ
տեսայ:

ԻՍԱՅԻ, կարապէտին:

Դուք վուրք ծառայ չունիք, Գարասիմ Նակուլիչ:

ԿԱՐԱՊԵՏ

Հա, չէ, դէղիղի պտտի բիջն է էլն:

ԻՍՍՅԻ

Իժուժ պատի բջի արով թողնում իս դուսը ար-
չըկատ :

ԿԱՐԱՊԵՏ

Թէ վուր ասի վուր իր զէղիղի հիդ է էլի, օխնած
հոքի. նա էլ ճամփեմէն ուրիշ տիղ է գնացի . . .
էհ, բարեցէք, (վէր կէնալու:) զլեացաութին տվի
ձիդ: (Անէսը վէր էն կէնալու:) Հիմի դուն զիդիս,
վուրթի, եփոր շնուր կու բերիս, ինձ ամա մինձ
ուրախութիւն կուլի: (Գէորգը ոչ ջուսում է,) ամա թէ
Աստուձ կու սիրիս, վեգեաներեմէն ձեռը վիկալ . . .
էնէնց, իրիգնապահը, էս օրերումը, եփոր քեփդ
տայ . . . զիդիս փողոցի մարթիք ինք, վուրթի,
ցերեկով զիփ բանումն ինք:

ԳԷՈՐԳ

Շատ լաւ. շատ լաւ:

ԿԱՐԱՊԵՏ

Աբա եփը մնամ քիզ, վուրթի:

ԳԷՈՐԳ

Երբ կամենաք, ես այս օրերս բողորովին ազատ եմ:

ԿԱՐԱՊԵՏ

Գիդիս ի՛նչ է, վուրթի, արի ցերեմօնիէքը զէնը
թողնիք, հէնց էսօր էւէտ չայու վրայ համեցէք
ինձ մօտ . . . ըմ, ի՛նչ կօսիս, լաւ չիմ ասում:

ԳԷՈՐԳ

Ինչու չէ, մեծաւ ուրախութեամբ, Գարասիմ Ես-
կուլի:

ԿԱՐԱՊԵՏ

Բաս կու մնամ քիզ, վուրթի. Իսայու հիդ մէտի

շնուր կու բերիք . . . էտէնց . . . (Գէորգին յետէ է պատի:)
Բարով մնաս ու բարով գաս . . . (Գեղեւանին:) Գուք
էլ բարով մնաք, զէղի. Աստուձ վերջեներուս բա-
րի անէ:

ՔԵԹԵԻԱՆ

Շնորակալ ինք, ջափա քաշեցիք . . . Աստուձ ձիր
մէ օրը հազար անէ, վուր իմ վուրթու սիրտը
հանգստացրիք: Իմ անտիս քվերը շատ հարց ու
բարով կօնիք իմ մաղիէր:

ԿԱՐԱՊԵՏ

Ձուխտ աճկիս, մնաք բարով:

ԳԷՈՐԳ, հէտը գնալով մէնչիս դուսը:

Գնաք բարով:

Կարապետը դուստ է գնում մեջիս դուսից:

ՏԵՍԻԼ Է

ՔԵԹԵԻԱՆ, ԳԷՈՐԳ, ԻՍՍՅԻ

ՔԵԹԵԻԱՆ

Գնա ու գնա, վուրթի, բախտաւուր իս էլի:

ԳԷՈՐԳ

Աստուձ տար որ այդպէս լինէր:

ԻՍՍՅԻ

Հը, վունց է Իսայու բերած խաբարը. հիմի էլ
փիս մարթ իմ:

ԳԷՈՐԳ

Շատ լաւ մարդ ես, Իսայի ջան, հիմի տեսնեք
աղջկան ինչպէս կը հաւանենք:

ՏԵՍԻԼ Թ

Ն Բ Ա Ն Ք , Խ Ա Մ Փ Ե Ր Ի

ՔԵԹԵՒԱՆ

Օ՛հ , լուսը քու տեսնողին :

ԻՍԱՅԻ , նսրած եւ առանցին :

Էս անիծածն էլ վճռորդի էր հիմի :

ԽԱՄՓԵՐԻ , շո-ր շո-ր խօսելով :

Շէմովդդդի փէխի , գծղալօրդէթ Ղմէրթի , փէխի չէ-
մի , կվալն անդէլօղիսա , բարիդուռն , Աստձու բարին ,
քէփեներուդ վճռնց է , ի՞նչ իք անում , ի՞նչ բարին
հարցնիմ , վճռնց իք , վճռնց կաք , խօ լուռ իք դիփուներդ :

Ղալիբան վայր է գյու-ճ ալուսի վրայ :

ԻՍԱՅԻ առանցին :

Սարակէլ է՛ :

ԽԱՄՓԵՐԻ , պէսնելով Իսայրան :

Էս մարդն ո՞վ է : Քան , Իսային չէ՛ :

ՔԵԹԵՒԱՆ

Հա , իմ Գիօրգու Իսային է :

ԽԱՄՓԵՐԻ

Մէ բաշ չը ճանչըցայ : (Իսայրան :) Ի՞նչ բարին
հարցնիմ : (Իսային համենում է որի հանգնել :) Ուր իս
նիղանում , գէթաղվա , համեցէք նստի :

ԻՍԱՅԻ , նսրած :

Փառք Աստձու , շնորակալ իմ :

ՔԵԹԵՒԱՆ

Էս ո՞ւր իս կորի , քան , վուր բջի ջանը մաշվեցաւ-
չատ քու պտուտելմէն :

ԽԱՄՓԵՐԻ , նսրելով ալուսի վրայ :

Տաք տաք բանուան իմ , Քեթեւան ջան . իմ տա-
լուչ տղայ Կօնօի համա ձլել մէ ախչիկ զթայ , տա-
թուաման առաչ իմ , քու արիւր :

ՔԵԹԵՒԱՆ , նսրած է ստապի վրայ :

Գիղէի վուր էտ հանգի բան կուլն է՛ :

ԽԱՄՓԵՐԻ

Ջանս զնայ էրեզվան դէսը . Գիօրգին պրծնի ամէն
ցաւեմէն : Ո՞ւր է , տանը չէ՞ իմ թայգուլը՛ :

ՔԵԹԵՒԱՆ , ժպտալով :

Յօրէս դուս դու քայ , տանն է :

ԽԱՄՓԵՐԻ

Վենացվալէ նրա պէտլած ջանին , ուրիշ իմքին է ,
Քեթեւան ջան . աշխրքի տղէրք իմ տեսնում , մէկը
չունէ նրա շնուքն ու լազաթը . ուրբուրում է միգ
դիփուներս : Բաս չէ ու Կօնօն կուլն . հոքիս հանից
դրուստ էլի . խօմ գիղիս նրա ափալը , ծանդր ժաժ
գալ գիղէ . ջեր մուլափ ու , ջեր բան ունիմ ու , ջեր
էսէնց է ու , ջեր էնէնց է ու . իմն ինձ հասաւ ինչոու
Խօջի վանքը դուս տարայ : Հիմի էնդի , մէկ անց-
կացնիլ էրիտ , էրկու անցկացնիլ էրիտ , հալից ու
մաշից խիղճ ախչկան . հըն , հըն , հըն , հըն , վեր-
չը բէլգէն էրիտ :

ԻՍԱՅԻ , առանցին :

Ձիեմէն մարթ վէր կու բերէ էս անիծածը .

ԽԱՄՓԵՐԻ , շարտանակելով :

Ծամալօ օքմինը կու ասիմ աշխրքումը : (Ծաղրելով :)
Ը՛ամ , ը՛ամ , ը՛ամ . ջանդա բէզար էլայ դրուստ էլի :
Ը՛յի , Աստուձ անէ նրա գիււանը : Տղէն պիտի տղայ

ըլն, չախմբիս պէծք վեր ըլն անում . . . Զնսով ձէ-
թիւր ին, Քեթեան ջան :

Քեթեան, Հանգեալ :

Խամփերի, քիզ բան հարցնիմ . . .

ԽԱՄՓԵՐԻ, Խօսքը հարելով :

Հն, ղուրթ, ի՞նչ էք հայհարա կանչի, փափէն
խօմ չէ սառի :

ՏԵՍԻԼ Ժ

ՆՐԱՆՔ, ԳԵՈՐԳ.

ԳԵՈՐԳ, դուրս գալով ու ղուրթի պարտի սե ժելեփով և
անդամաւորութիւնով, սե փողոսայր չեափն և Բաշինսայր
հոգնելով :

Դորա պատասխանն էլ ղուր ասն էլն, ղէղիգա .
այդ ի՞նչեր ես պատմում :

Փողոսայր հարում է :

ԻՍԱՅԻ, ասանջնն :

Երիհն . . .

ԽԱՄՓԵՐԻ, ղէր Լուչելով Կէրիլն :

Գէնացվալոս ղէղիգէն : (Դրիում է Դեորգէնն) Ասկի
ուրքար ջան, վունց իս, վունց :

ԳԵՈՐԳ

Լաւ եմ, ղէղիգա, ղուր ի՞նչպէս ես :

ԽԱՄՓԵՐԻ

Քի լաւ ունենամ, վուրթի, ինձ ըն միճիրս :
(Զեափով իմում է Գրդանին) Այ, էքուց տաս թու-
ման նիկալայի մանէթը կու չխչիկայ էստի, միր

անգալ Կօնօի համա կլէկն ու նիշադուրը հարդիլ իմ,
ուզում իմ Խլէպուզինց ախչկայ հիդ լէհէմի . ղիփ
էրկու սահաթ չը կայ բէլգէն տալ տվն, քու արիւր :

Նսարմ է իր Կէրը :

ԳԵՈՐԳ

Բանը վերջացրել ես, ղէղիգա, էլ լէհէմելը ղրն է :

Խարում է մե անուուլ Բէլեանին և Խամփերու

Զը Կէրը :

ԽԱՄՓԵՐԻ

Բէլգէն ցամաք բան է ջեր, ցաւդ տանիմ. նշանը
վուր կու տայ, էն չախը կու լհէմվն :

ԳԵՈՐԳ

Նշանը որ լհէմվն է, ուրեմն պասկին էլ մէկ
ուրիշ անուն դրած կը լնես :

ԽԱՄՓԵՐԻ

Փսակը խօմ յաւիտենական ջնջել է, անումիս
մեռնիմ : Նփ կուլի մէքու թաղին էլ արժանի անիս,
վուր մէ չաղ քրթամ վեր խփիմ. հարուր թուփէն
պակաս չիմ անի, քու արիւր :

ԻՍԱՅԻ, ասանջնն :

Հիմի էս էր պակաս :

Քեթեան, հեգնան չեով :

Ինքսուն ու ինը վուր ըլն, բողաղիկ կու կանգնի, այ :

ԽԱՄՓԵՐԻ

Ինչի լայիկ կօնիմ :

ԳԵՈՐԳ, Ժողոսայր :

Լաւ ղէղիգա ես եղել, ես ու իմ Աստուածը, իմ
մասին էլ պէտք է քրթամ վեր առնես և ինձ խափես :

ԽԱՄՓՆՐԻ

Քիզ ուր իմ խափում, չարըդ տանիմ, քիմէն խօմ չիմ ուզում. քիզ ինչ վուր քու աներանցմէն աւելն փուղ դուս գջլիմ: Գուն ումը գուզիս հաւնի, էտումը չիմ խառնվի, օղունդ սիրուն կի ըլն, զըղճերու գլուխ չունիմ: Մ՛յի տա՛ տա՛ տա՛ տա՛ տա՛ . . .

ԽԱՍՅԻ, առանչին:

Ա՛յ, անուճը կտրէ Աստուճ:

ԽԱՄՓՆՐԻ, շարունակելով:

Ամա ինչրու հարուր թումանը չը թափ տալ տամ, դուն չը մեռնիս վուր վուտղ չիմ դուս դնիլ տա. թուղ ջանեներուն վազի, համբրին՝ քիզ ինչ, քու բաժնքի փուղեմէն խօմ չիմ ուզում:

ԽԱՍՅԻ, առանչին:

Քու տունն Աստուճ քանդէ:

ԳԵՈՐԳ

Է՛հ, լաւ է, դէզիդա, մի՞թէ կարելի է այդպէս խօսել:

Գնում է դէպի սեղանը եւ ծխախոտ վաւում:

ՔԵԹԵՒԱՆ, Խամբերուն, կիսաչայն:

Ախար, էն մարթն էնդի նստած է, ի՛նչ կօտէ, ամութ չէ:

ԽԱՄՓՆՐԻ, Բէլեւանին:

Ի՞նչի ամութ է, էտ աղաթ է. բաս էս միտկ չիմ, քսան տիղ հազար ծակ ու ծուկ ունիմ: Էլն տէրը բարի տայ հիմիկվան դարդիմանդ ախչկերանցը. էրեզ չուրս քսան հոքու էրկու էրկու մանէթ վէր գցիլ տվի մարթագլուխ, քու աղիկ արիվն իմ ասում: Մէ պիկնիկ սարքիմ, մէ պիկնիկ, վուր քու հաւնած:

Մէ տղամարթ չի ըլն զարթնի սաղանդրերուն: (Գրէչուլ Գեորգին:) Գո՛ւզիս դուն էլ արի, գէնացվա, թո՛ղ խիթարվին, սիրուն տղայ իս. (Միծաղում է:) հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛ . . .

ԽԱՍՅԻ, առանչին:

Օ՛հ, հօ՛, հօ՛, հօ՛ հօ՛ . . .

ՔԵԹԵՒԱՆ, Խամբերուն չանչ (բօքոյա) անելով:

Ը՛հ:

ԳԵՈՐԳ

Է՛հ, ի՛նչեր ես ասում, դէզիդա:

ԽԱՄՓՆՐԻ

Ինչեր իմ ասում, քու ումիկն ունիմ, քի պէս փեսացու էլ վուրդի կու ռաստ գայ ինձ: Ամէն սրբփերու մօդ իմ աղանչաքն էն է էլն, վուր քու թագին արժանի անին ինձ. ամագս մո՛ւթ կորչի: Գեորգը ծիծաղում է:

ԽԱՍՅԻ, առանչին:

Տէր օղորմած Աստուճ:

ՔԵԹԵՒԱՆ

Ի՛հ, լաւ է, քն, ձէնդ պահէ, մէ անգա՛ճ դի ինչ իմ ասում է՛:

ԽԱՄՓՆՐԻ, նստելով:

Հա, դուրթ ի՛նչ բանի էք կանչի:

ՔԵԹԵՒԱՆ

Թո՛ղնում իս վուր մարթ խօսի:

ԽԱՍՅԻ, առանչին:

Չաչանակ է դրուստ:

ԳԵՈՐԳ

Գէզիդա, ուզում եմ նշանվի:

ԽԱՄՓԵՐԻ

Հալա, գէնացվալոս Խամփերին :

ԳԷՈՐԳ

ձմարիտ . ի՞նչպէս ասացիր էլախտ . . . հա, լէհէ-
մածի պէս է :

ԽԱՄՓԵՐԻ

Իժուժ, առանց ի՞նձ, թավլափիան :

ՔԵԹԵՒԱՆ

Քա, մո՛ւլափ չիս տա . բաս ի՞նչի կանչեցի, թէ
առանց քիզ էր :

ԽԱՄՓԵՐԻ

Իժուժ, իմ հարուր թու՛մանը :

ՔԵԹԵՒԱՆ

Էլի :

ԳԷՈՐԳ, յունդիմանսն չե՛ող :

Դէդիդա :

ԻԱԱՅԻ, ԽԱՄՓԵՐԻ :

Արի հիմի ու էլը ցխեմէն հանէ . վո՛ւրդի էկա-
էս անիծածը : (Խամփերուն :) Հարուր չէ, էրկու հա-
րուր չիս ուղի . ինչ կարքն է կուլի էլի :

ԽԱՄՓԵՐԻ, ՎԵՐ ԿԵՆԱՐԸ :

Միախ, զիախ, 'ես կարք մարք չիմ գիդի . էս
հանգի պէտլած տղին պակաս կու թողնիմ :

ԳԷՈՐԳԸ ԺԵՃԱՂՈՒՄ Է :

ԻԱԱՅԻ

Լաւ է, լաւ, մէ լաւ շային էլ զարուլ կօնիս . 'ես
կու շինիմ :

ԽԱՄՓԵՐԻ

Բաս ի՞նչ իմ արի :

ՔԵԹԵՒԱՆ, ԽԱՄՓԵՐԱՆ :

Քա, մէ դէսն արի : (Ասանչին :) Սիրաթա գնաց :
ԳԷՈՐԳ

Է՛հ, դէդիդա, հերիք է, Աստուած կը սիրես :
(Խայուն :) Իսայի, դու սրա հանաքներին ականջ մի՛
գնիր :

ԽԱՄՓԵՐԻ

Իսկի էլ հանաք չիմանում . մէ ինձ ասէք չմը տիղ է՛ :
ՔԵԹԵՒԱՆ

Էրկու հաղար թու՛ման փուղ, 'երիք հարուր թու-
մնի բաժինք ու հինգ տարով սարքած կարքած տուն .
ախչիկն էլ՝ սիրուն, ջէհէլ, ուսում առած, լա-
հօրն ու մօր վուրթի ու լաւ սիրելի բարեկամի տէր :

ԽԱՄՓԵՐԻ

Վահ, վահ, վահ, ծղա՛րօ է : (Գրու՛մ է ԳԷՈՐ-
ԳԷ՛ն :) Հալա, գէնացվալոս դէդիդէն, զո՛ւրթ է ասում
Քեթեւանը :

ԳԷՈՐԳ

Ձե՛ս իմանում որ դէդէն սուտ խօսել չէ իմա-
նում . յետոյ որ զիդենաս, դէդիդա, ի՞նչ սիրուն է,
ի՞նչ սիրուն, օհ, հօ, հօ, հօ . . .

Իսային զարմանում է :

ԽԱՄՓԵՐԻ

Գէնացվալոս քիզ իմ պուխը, էտէնց լաւ ախչիկ
ու էտ զաղամի՛ փուղ :

ԳԷՈՐԳ

Է՛հ, փողն ի՞նչ յիշելու է, դէդիդա, աղջիկ եմ
ասում, որ քաղաքումը հատը չկայ :

Իսային փառ է պոյի Աստուծան :

ԽԱՄՓԵՐԻ

Բաս հիմի էրկու հարուրէն պակաս չիմ անի :

ԻՍԱՅԻ

Տաս տաս թուամանուց իս ուզում, թէ հինգ հինգ թուամանուց էլ վուր ըլն հաջաթ չէ :

ԽԱՄՓԵՐԻ

Էրնէկ զիդենամ, Իսայի, դուն ի՞նչ բան ունիս . մօցիքուը դուն չըլիս :

ԻՍԱՅԻ, վէր Լուչէլով :

Մօցիքուը էլ իս ու չիս էլ զիդի :

ՔԵԹԵՒԱՆ, Տօթնալով Խամֆէրուան :

Սու, քա, ի՞նչ էլաւ քիդ . իս ամութու գեղինը մտայ :

ԻՍԱՅԻ, ասանչին և Կասայն :

Անսկամ :

ԳԵՈՐԳ, Տօթնալով Իսայուան :

Իսայի, Իսայի : (Իսասնալով դէպի Խամֆէրին) Դէդիդա, ինչ եղաւ քեզ . Աստուած վկայ, ինձ դուր չէ գալի քո արարմունքը . դուքան բազար իս չէ մեր տունը, մի փոքր քաղաքավարութիւն ունեցիր է :

Իսային նստում է իր պեշը :

ՔԵԹԵՒԱՆ, ասանչին :

Էրնէկ չէի կանչի :

ԽԱՄՓԵՐԻ

Վիս էկադրէբա . բաս կու թողնիմ վուր սա նշնէ քիդ : Մէ ասէք հալա ո՞վ է, ո՞ւմ ախչիկն իս ուզում, իմ ճամփէն Կես կու գլթնիմ :

Անչնում է Քելեւանի ոջ Կոշը :

ՔԵԹԵՒԱՆ

Ախար, օինած հոքի, մէ անգճիդ էլ հիրթ չիս տալի վուր մարթ իմքին ասէ ու, ո՞վ ինչ անէ, համան լիդուտ իս բանեցնում . էտ դադա էլ խօսիլ կուլի, մէ խջալաթ քաշէ, է :

ԻՍԱՅԻ, ասանչին :

Քամու ջաղաց է, էլի, անիծածը :

ԽԱՄՓԵՐԻ, աստի Ծօ :

Ահա, բերնիս կոխպէք իմ դնում : (Զեւարդ իր բէրանը ծածկում է) Աբա, ո՞վ է, ասէք :

Նորից բէրանը ծածկում է :

ԻՍԱՅԻ, վէր Կէնալով :

Տօ, էլ ինչ նուր չար, նուր բարի . ուշացանք, Գիօրգի, Աստուձ զիդենայ, դնա չուստ շուրրդ հաքի է :

ԳԵՈՐԳ

Ես սահաթիս, Իսայի ջան : (Խամֆէրուան) Դէդիդա, մէկ ինձ ասա, Գարասիմ Եակուլիչ Չամբախովի աղջկան կը ճանաչես :

Այս ժամանակ Քելեւանը գոնիում է Իսայուան

և Գեորգի մէջ պեշը, ինչ սորանից ոջ

Խամֆէրին :

ԽԱՄՓԵՐԻ, արհամարհանալով :

Նրան իս ուզում :

Անչնը շոտարում էն :

ԳԵՈՐԳ, վախեցած :

Հէնց նորան, ի՞նչ է :

ԽԱՄՓԵՐԻ

Իժում, նրան իք ասում թէ սիրուն է :

ԳԷՈՐԳ

Ի՞նչ է, սիրուն չէ՞:

Իսային, Գեորգիյ եւ Քէլեաննի ծածուկ,
նշաններով խորքում է Խամֆերուն շնէլ,
խոսարանայով նորան փողի թեժ գոհարներ,
Էսոյ Խամֆերին չէ պէսնում:

ԽԱՄՓԵՐԻ, շարունակելով:

Նրա սիրունութիւնը առչի իմանալու է:

ՔԵԹԵՒԱՆ

Վո՛ւյ, քոռանամ՝ ես, զո՛ւրթ իս ասում:

ԳԷՈՐԳ

Ի՞նչ ես ասում. դէդիդա, իմ աչքով եմ տեսել:

ԻՍԱՅԻ, Գեորգին՝ ցածր,

Աստուճ գիղենայ, խափում է:

ԽԱՄՓԵՐԻ

Կո՛ւլի ուրիշ օքմին ին շանց տվի, թէ չէ Ձամբա-
խինց Կա . . . (Իսային կրէնում է Ռեանոյն նշանները,
Խամֆերին հասկանում է:) . . . բապիտի ախշկան սիրուն
չին ասում:

ՔԵԹԵՒԱՆ

Լիզուտ պապանձվի, հըս՝. հէնց գիղէի դուն
ինքո իս տեսի, կինաղամ սիրոս զնաց:

Անցնում է Խամֆերու ող կողմը եւ պախի
վրայ նստում:

ԳԷՈՐԳ

Ուրեմն դու ինքդ չե՞ս տեսել:

ԽԱՄՓԵՐԻ

Ձէ, վուրթի, էնէնց իմացիլ իմ:

Խորհրդաւոր հայեացք է չգում Իսայու վրայ:

ԳԷՈՐԳ, նշարելով Խամֆերու խաշը, սասորէ շփուղում է:

Այդ ի՞նչ է նշանակում. . . ՕՏ, Աստուած:

Բարկայած հէսանում է:

ԻՍԱՅԻ, Խամֆերուն:

Վուր չիս տեսի, բաս ի՞նչեր իս դուս տալի.
անմրթի իմ քի մօդ:

ՔԵԹԵՒԱՆ

Անմիղ խիղճ էրէխիս սիրուն էլ խարաբ իս անում.
հոքուտ ի՞նչ իս ասում: Ետէնց աչքարա սուտ կու-
լի, թավլափինն:

ԳԷՈՐԳ, Բեթ խորից, Բարկայած:

Ձեր մտկումն է սուտ:

ՔԵԹԵՒԱՆ, Խամֆերուն:

Քու աճկն էլ:

ԽԱՄՓԵՐԻ

Նս ի՞նչ անիմ, քա. ինչոր իմացիլ իմ, էն իմ
ասում. կուլի զուրթ խիստ սիրուն էլ է, Նս ի՞նչ
գիղիմ: Ետի մուլափ տվէք, զնամ գրուտ խաբար
բերիմ:

Գնում է շալիբան վերջներ:

ԻՍԱՅԻ, Գեորգին ծածուկ:

Ա՛յ, ուզում է զնա իր քրթամը վեր խփի. արա
զրա խօսկն աւտայու է՞:

ԳԷՈՐԳ

Այսուհետեւ քեզ էլ չեմ հաւատում, Իսայի. հա-
ւատիցս հանեցիք բոլորովին:

Եփուհում Տան է գայի:

ԻՍԱՅԻ

Վա՛ . . .

ԽԱՄՓԵՐԻ, զաւելիքան չեառին:

Գնում իմ, այ:

ԻՍԱՅԻ, ասանչին և ինսայան:

Ա՛յ, ջառը գնաս ու ջհանդամը, հը:

ԲԵԹԵԻԱՆ, վէր Լուչելով:

Բու գնալն իսկի էլ հարկավոր չէ. (Խլելով Խամ-
փերու չեառին զաւելիքան:) իր աճկով տեսիլ էլ է ու
էլի կու տեսնէ: (Գեորգին:) Գնա, վուրթի, էլ մի
ուշանա, շուրրդ հաքի:

ԳԵՈՐԳ, նեղայած:

Ինձ կը սիրես, դէզի, ձեռք վերցրու ինձնից.
էլ ես ոչ մէկ տեղ չեմ գնում:

ԲԵԹԵԻԱՆ, զաւելիքան չեառին:

Վ՛ոյ, քուանամ ու կուրանամ ես: (Խամփերուն:)

Ա՛յ, կինծիա կտորվել էր վուր չէր էկի, հը:

Ղաւելիքան գտած է ավետի վրայ:

ԻՍԱՅԻ, ասանչին և ինսայան:

Պիտի էտէնց էր էլի, վուր լաւ էր ըլի:

ԲԵԹԵԻԱՆ, շարունակելով:

Երնէկ զիգեմամ հայհարա ո՛ւր էի կանչում քիզ.
խօմ զիդէի քու ափալը: (Գեորգին:) Ի՛նչ իս անում,
վուրթի, գնա շուրրդ հաքի, գէնացվալու դէզէն:

Այս պեղից սխած ամէն անգամ, Էրբ Գեորգը

բարչայած Տան գալիս Էրեսը պտտի հոշն է
անում և Գելեւանը նորս հետ խօսում է, Խամ-
փերին և Խային թե՛ մը հոգնամ ծածուկ
վիճում էն իրար հետ. իսկ հէնց որ Գեորգը
և Գելեւանը Էրեսը դարչնում էն նրանց
հոշն, նոսա ինչոյն հարում էն իրանց վէճը:

ԳԵՈՐԳ

Ձեմ գնում, չէ, դէզի:

ԲԵԹԵԻԱՆ

Աբա էտ ի՛նչ արարմունք է, վուրթի, բարէնց
վիկալ ու սաղ սաղ գերեզմանը դի ինձ:

ԳԵՈՐԳ, նեղայած:

Ա՛խ, Տէր Աստուած:

ԲԵԹԵԻԱՆ

Բիմէն չեմ արմնում, վուրթի, վուր քարափշուտա
Խամփերու խօսկերուն անգաճ իս գնում. չիս տես-
նում վուր սա իր փուրացաւանքն ունէ: (Խամփերին
յոյ պարզ վճարբար էր աջու հինգ հարը Խայուն, հե-
սանում է նրանից:) Աստուճ տայ, զլուխ գայ էս բանը,
դուն իրան տու ինչ ուզում է. վարսալամ, վարքա-
լամ, ա՛հա:

ԽԱՄՓԵՐԻ

Դրա բախշիք քրթմունն ո՛ւր իմ խառնում. դրա-
մէն առնիմ ու նրանք իրանց ախչիկը մուքթ սա-
ղացնի՛ն:

ԲԵԹԵԻԱՆ

Ա՛յ, ձէնդ կտրէ Հախման Տէրը, հը:

ԻՍԱՅԻ, ասանչին և ինսայան:

Ամին:

ԳԵՈՐԳ, բարչայած:

Վերջապէս համը տանում ես, դէզիդա:

ԻՍԱՅԻ, ասանչին:

Ա՛յ, օղորմի քու հօրը:

ԽԱՄՓԵՐԻ, ինսայան:

Մտիկ էս բէհայուն:

ՔԵԹԵՒԱՆ , ԲՈՒՆԱՆՆԻ ԳԵՂԵՆ :

Արի , արի , գէնացվալու դէդէն : Ախար էն պա-
տուական մարթու խօսկիրը միտդ չէ : Գնա , քու աճ-
կով տիս զուրթն ու սուտը . թէ չիս հաւնի , ձեռքս
սիլ է բռնում , թամասուքով խօսմ չիս կապիլ :

ԳԵՌՈՒՅ , ԳԵՂԵՆ ԵՄԵՆԻՆԻ ԵՄԵՆԻՆԻ :

Այո , այո , ես նորան խոստացայ գնալ և պէտք է
կատարեմ խօսքս :

ՏԵՍԻԼ ԺԱ

ՔԵԹԵՒԱՆ , ԽԱՄՓԵՐԻ , ԻՍԱՅԻ

ՔԵԹԵՒԱՆ , ԽԱՄՓԵՐԱՆ :

Խնդրեմ քու գլուխը . էտ ղաղա էլ փուղի թամա-
հու թիւն : Էն աղչկայ տէրիքը վուր իմանան , թէ
քի պէս քուր իմ ունեցի , էլ էրեաներուս չին պիտի
մտիկ անի , հախ Աստուծու :

ԽԱՄՓԵՐԻ , ԽԱՄՓԵՐԱՆԻՆԻ :

Վո՛ւյ նրանց պէ՛ծին :

ՔԵԹԵՒԱՆ , ԽԱՄՓԵՐԱՆ :

Լիզուտ չորնայ ու պրծնի , ահրա՛ :

ԻՍԱՅԻ , ԽԱՄՓԵՐԱՆ ԵՄԵՆԻՆԻ :

Ուր է , հը՛ :

ՔԵԹԵՒԱՆ

Էլ նուր մէկէլանց չս խառնչտորիս , Խամփերի ,
թէ չէ , Աստուծ գիգենայ , իրնի մահի կու կարվինք
մէկմէկեմէն : (ԽԱՄՓԵՐԱՆ :) Խայի ջան , մէ քիչ էլ մու-

լախ տու , դէթաղվա , յօրէս շուրը կու հաքցնիմ
ու տար , գէնացվալէ :

ԻՍԱՅԻ

Էստի իմ , էստի , դէդի :

ՔԵԹԵՒԱՆ , ԽԱՄՓԵՐԱՆ ԵՄԵՆԻՆԻ :

Լա՛ւ տարի քի դայ , լա՛ւ իմքին դուն իս դառի՛ :

Դուրս է գնում ող դուռնից

ՏԵՍԻԼ ԺԲ

ԽԱՄՓԵՐԻ , ԻՍԱՅԻ

ԻՍԱՅԻ

Ախար , օխնած հոքի , ի՞նչ իս ասում . իսուն թու-
ման էլ քրթամ կուլի՛ :

ԽԱՄՓԵՐԻ

Ինչէ՛ , թէ կի ուրիշնիրը հարուրնիր էլ կու վեկալ-
նին , ինձ իսունը հառամ է՛ :

ԻՍԱՅԻ

Ի՞նչ իս շինի , ախար , վուր մէ բաշ իսուն թուման
իս ուզում . մէ տաս թուման ըլի , քսան թուման
ըլի , էլի հա , թէ չէ էտ ղաղամի բան կուլի դուն իս
ուզում : Բաս ինձ ի՞նչ պիտի ննդնի , էրեզվան դէսը
մահվան քրտնքումը քառսուն ջեր անց ու դարց իմ
արի : Մէ քիչ էլ Աստուծ ունեցի , օխնած հոքի , է՛ :

ԽԱՄՓԵՐԻ

Քու բանը դուն գիգիս , Խայի , իմ բանը ես : Բաց
ասիմ ու վուչ ամանչիմ , վուր թէ էս սահաթիս չիս
բերի ու չիս սվի , դիպ տակն ու վրէն կօնիմ , Աս-

տուճածինը դիզենայ : Աշքարա էրևում է վուր ու-
րիչ օքմին է տեսի . բաս չէ ու Ջամբախինց կուբա-
ճիէն կուէր :

ԻՍԱՅԻ , շփուում , էրեսը խաչ է հանում եւ ուսուցին :
Միղայ Գիզ , Տէր Աստուծ , մակունս ինչիր է գալի :
ԽԱՄՓԵՐԻ

Չիս դնում :

ԻՍԱՅԻ

Ախար յօրէս դուս զու քայ էն տղէն . տանիմ ,
էնդի կօսիմ Գարասիմ Եակուլէչին , կօսիմ խոստացայ :
ԽԱՄՓԵՐԻ

Քու արիւր վուր է վուսն էլ չիմ փոխիլ տա , ին-
չըու չիս բերի :

ԻՍԱՅԻ

Քու կնիկ արմատ ասողին էլ ինչ ասիմ . դնամ բե-
րիմ , աճկդ դի , հը . էն տղին էլա մայինց սրտա-
վուրէ ինչըու իմ գայլ :

ԽԱՄՓԵՐԻ

Էտուրը 'ես գիդիմ :

ԻՍԱՅԻ , գնալով աղաղակում է :

Այ , յայ , յայ , յայ , յայ . . .

Դուսն է գնում Տըջի դասնց :

ՏԵՍԻԼ ԺԳ

ԽԱՄՓԵՐԻ , Դէնայ :

Էտէնց , այ . աճկիրս ուռիլ է Ջամբախինց բա-
կուրի համա . նրա պտուղն էլ կարիմ . 'ես իմ թի-

քէն լաւ աշիմ դիփունանց վրայ : Ամա իմ քվեր տղէն
խօմ չէ՞ զգվի . . . Կուլի դուրթ Մարքրիտին ըլի տե-
սի ու հաւնի . . . Թային փուղ ու բաժինքն աճկիրը
կապիլ է : Ղուրթ էն զագա փուղ ու բաժինք կու-
լի . . . ում աճկիրն արանգվա չի անի . 'ես էլ վուր
ըլիմ , գուզիմ ու . ամա թէ կի ինքը հաւնում է ու
ուզում է , 'ես ինչ իմ հոքում , դարդերուս գլուխն է .
մինք էլ կու վլվանք :

ՏԵՍԻԼ ԺԴ

ԽԱՄՓԵՐԻ , ԳԵՈՐԳ

ԳԵՈՐԳ , դուսն է գայի աջ դասնից Քրիստի , սպիտակ փոզ-
դասիով , չեսէն յիշնորս եւ սպիտակ չեսանոյներ : Դասնա-
լով դէպի հոսիս :

Լաւ է , լաւ , դէդի , դու զնա , (Խամբերուն) Դէդէն
կանչում է : (Աջ ու չախ նայելով) Իսային ի՞նչ եղաւ :
ԽԱՄՓԵՐԻ

Յօրէս զու քայ , զէնացվալոս Խամփերին , ինձ
վրայ ուր իս նիղանում . ախար հիմի էլ վուր չը
խէրվիմ , էլ 'ե՛փուցութի :

ԳԵՈՐԳ , շփուում է , յետոյ գլխարկը դնելով սեղանի վրայ
եւ չեսանոյները հագնելով :
(Դէդիդա , ասն դրուստ 'այն աղջկան կը ծանաչե՞ս
թէ չէ :

ԽԱՄՓԵՐԻ , կախալով :

Չէ . . . վուրթի . . . չիմ տեսի . (Հաստատապէս) :
ամա լաւ ախչիկ ին գովում , հախ Աստուծ , ու էլախա

էնդուր փանեցի, վուր իմ թիբէն չը կորչի: Տիս վուր ուստութեամբ ժափ էկայ. զնայ վաղկիվաղ քու պարուն Իսային ու զէմուղէմը կուէ քու անիրուչը, վուր էս էլ զէրիզա կամ աշխրբումն ու ինձ էլ յարգ ու պատիւ է հարկաւ ուր:

ԳԵՈՐԳ

Ի՞նչ էս ասում . . . օհ, անաստուածներ . . . Իուք ինձ բարեկամութիւն անելու էք եկել, թէ երես սեւացնելու: (Աստուծոյն:) Անիծուէք դուք, անիծուէք. ձեզ հետ խօսելն անդամ անպատվութիւն է:

Իտրնայած նստած է:

ԽԱՄՓԵՐԻ

Էստու համա դուն ո՞ր իս նիղանում. աղաթ է, վուրթի: Իուն քու բանը զայիմ բռնէ. հանիս՝ ու զէ, չը հստնիս՝ խէիրաթ չիմ տեսնի. ամա ումն ուզես, զիդացի վուր էս էլ իմ փային դուզիմ . . .



(Չարի հոռնիցի Բէլեհոսը կոչուած է՝ Խամփերի, Խամփերի:) Իախս իմ, գայիս: Չարըդ տանիմ, մինիղանս, ասկի ուրբար, Գիօրդի ջան: (Ձեռնը Գեորգի ոսի վրայ դնելով:) Իուն ջեր նշնվե, վուրթի, զօցն էդի զամն է. հարսնըքումը խախտի ջուր կու բերիմ, քու տրիւր, զիփունի վրայ շատ բանը էս կու շնիմ, շուշպար ու լէզզեվար էլ կու խաղամ, թէ զուզես էհնց զիդիս չիմ կանա, ինչ անիմ թէ: Խուն տարեկան աւել իմ, այ՝ (Օտըրածու չեռով պար գարով:)

- Չիֆ թը պի տամ, ջիֆ թը տի տու,
- Չիֆ թը պի տամ, ջիֆ թը տի տու.
- Գը՛նգ, դը՛նգ, ջիֆ թը պի տու,
- Իընգ տը պը տըմ, ջիֆ թը տի տու:

Իուն միր աղաթն ու սովորութիւնը խակի էլ այնումը մի զցի, վուրթի: (Գրէչու՛լ Գեորգին, Հլուիւն համբարած է:) Չարըդ տանիմ, Գիօրդի ջան, ասկի ուրբար, Գիօրդի ջան:

Ինչու է վաղու՛ չարի դոռնիցի: Ինչու է վաղու՛ չարի դոռնիցի: Ինչու է վաղու՛ չարի դոռնիցի:

ՏԵՍԻՒ ԺԵ

ԳԵՈՐԳ, Դէսո՛ւ. Էրնար լուսնի-նից յէպոյ ե տեշից վեր լուսնելով:

Ա՛յ, Աստուած անիծէ ձեր այդ աղաթն էլ ու սովորութիւնն էլ . . . Այս ի՞նչ խայտառակութիւն է. ի՞նչ կարծիք պէտք է տանի այժմ այն մարդը մեզ վրայ: Օ՛հ, ամօթ, հազար ամօթ: Ձէ, այս բոլորը սովորականից դուրս բաներ են և այստեղ անպատճառ մէկ զաղանիք կայ, որը աշխատում են ինձնից ծածկել . . . Ի՞նչ պիտի լինի. ի՞նչպէս իմանամ . . . Կարելի է ճշմարիտ իմ տեսած աղջիկը ուրիշ լինի և ինձ խաբելիս լինի՞ն, ի՞նչ կայ այստեղ զարմանալու. իմ մօրաքրոջ այն հայեացքը, որ նա ձգեց Բասյու վրայ, նորա փոփոխական խօսքերը, նորա կակազելը, վերջապէս իրան Բասյու զնալն, առանց ինձ սպասելու, բաւականին հաստատում են իմ կարծիքը . . . Այո՛, այո՛, այլ ևս կասկած չկայ, ինձ կամենում են խաբել, ինչպէս շատերին են խաբել . . . Օ՛հ, Տէր իմ, այս ինչ մարդիք են, այս ինչ երկիր է մեր երկիրը. ամեն մի քայլափոխում ստութիւն, խաբէութիւն, սուտ բարեկամ, սուտ

ազգական, մէկ չնչին օգտի համար պատրաստ ամե-
նամօտ մարդուն անդամ զոհել, նորա անունն ու
պատիւը խայտառակել: Զէ, ես այդպէս շուտ չեմ
խաբւիլ և մինչև ստոյգը չիմանամ թէ ի՛նչումն է
գործը, ոտս անգամ չեմ դնիլ Զամբախովի սանը:

Գլխաբիւ ծածկելով Դո-րս է գնում Տըջե
Դո-նիյ: Ըտրագոյրն իջնում է:

[Faint bleed-through text from the reverse side of the page]

[Faint bleed-through text from the reverse side of the page]

ԵՐԵՐՈՒՆԾ ԵՐՐՈՐԳ

[Faint bleed-through text from the reverse side of the page]

ՏԵՍԵՐԸՆ ԷՌՆՔԻՆ

Կարապետի տան առաջին արարուածի սենեակը: Ժամացոյցի սլաք-
ները ցոյց են տալի ժամի վեցը:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՍԱՐԳԻՍ, Տէսի. Խնուները սրբում է:

Զիւ մէ բաց չէլաւ Մարքրիտի բախտը... Երանի
գիղեկեամ թէ ուզողն ո՞վ է... Հնդու մաթա կու
տանէ, ձիր արիււր, հը... Ամա ինչ, հէստի հան-
գը զուքիլ ին ու զարթորել, վուր հրիշտակ կու
էրևայ դրուստ. էսէնց պէտլած ախչկան ո՞վ չի հաւ-
նի... Ի՛նչ արին, տօ. աւտաս կէս լիզըն աւել
սիպտկայ դիզ ըլն բանեցրի, բոյին էլ մէ թիզը մէ-
բաշ ին ուզում աւելընի լթիքը. դառաւ վուր շիմ-
շատ է ու շիմշատ, էլն... Փուղն ինչ հանդի բան
է, 'ես նրա մօզօնօղի հոքուն մեռնիմ, մէ ջուկտ
բաթիկէն մէտի կէս օրոււմը կարիլ տվին: Ամա ինչ
կրընգնիր ունէ, պայ, պայ, պայ, պայ, պայ...
'ես դաւի չունիմ, ախպէր. էն չաթուքէսներու

լափչքքնիրը տեսիլ իք, էրկու էն էն ղաղա կրքնդ-
 նիր իմ ասում, արիւս վկայ . . . Վայ, ճիր տունն
 Աստուծ շինէ, էս ի՞նչ Կերգիր է մեր քաղաքը .
 աօրնք էսօր խափեցին, էքուց լսօմ կու էրեայ,
 իժուժ դուք թամաշա արէք նրանց տուր ու դմկու-
 ցին : է՛հ, Աստուծ վերչը բարի անէ . լաւ ասչիկ է
 Մարքրիտը, ես ու իմ հօքին . էս ղաղա տարի է
 էստի ղուլուղ իմ անում, մէ օր նրամէն փիս խօսկ
 չիմ իմացի : Հիմի ի՛նչ անինք վուր էքուց էրեօր
 կու լուանայ ու էլն էն Մարքրիտը կուլն . սիրու-
 նութինն ու զղճութինը Ասաձու միղ է :

ՏԵՍԻԼ Բ

ՍԱՐԳԻՍ, ԿԱՐԱՊԵՏ

ԿԱՐԱՊԵՏ, ԿՐՈՅՈՒ ԿՐՈՅՈՒ ԿՐՈՅՈՒ :

Տօ, չը բերիր էնդունք :

ՍԱՐԳԻՍ

էս սահաթիս էէէտ ինքն ուստէն կու բերէ, աղա .
 ձեռին ունէր, մէ էրկու ասղն ծէր էլն պակաս է,
 հօսէ :

ԿԱՐԱՊԵՏ

Տօ, թէ՞ ասի վուր ղլխին կանգնի ու չուստ վրա-
 հասցրու :

ՍԱՐԳԻՍ

էս նմուտիս կու բերէ, աղա ջան, հէնց բռնէ
 հաղիր էր, իմ աճկով անսայ . ես էլ էստի աշխարհի
 բան ունիմ, ախար :

ԿԱՐԱՊԵՏ

լաւ, թէ ուշանայ, էլն գնա, հէնց ապրիս, ու
 չուստ վաղեցրու . . .

ՍԱՐԳԻՍ

Բաշուսթա, աղա ջան :

ԿԱՐԱՊԵՏ

էստի դիվ պրծար :

ՍԱՐԳԻՍ

Հրամանք իս, աղա . մէնակ ղօնաղն օթախն է
 մնացի ու անդուխար :

ԿԱՐԱՊԵՏ

լաւ բարաթ կարքի բի . դէս ու դէն ծաղկնիր
 կու դարօիս, վունցոր ասիլ իմ, մոռմիրը դիվ մէտի
 վառէ, պաղիէզղի դրան առչիվն էլ քուչէն աւիլէ,
 վուր իստակ ըլն . . .

ՍԱՐԳԻՍ

Հետիկ շինիմ, աղա ջան, վուր հայելայ :

ԿՐՈՅՈՒ Ե ԳՆՈՒՄ ՔԵՆ ԿՐՈՅՈՒ :

ՏԵՍԻԼ Գ

ԿԱՐԱՊԵՏ, ԱՅՈՒՆ . սիլ բո՞ւժը նստած է :

Բանս լաւ է գնում . ամէն կունեմէն եօնդնիրը
 ձքած է . փէիքրի արլաբուղի պէս դամբս զորձած
 է . . . Գու քայ հիմի պարուն փեսացուս, Ծանջի
 նման բզկալով, թրրիսկ, (Զեռչը չեռչիւն է խիւ՞մ :)
 դամբումս դէվէր կու ննգնի : Շատ իժուժ բղ—վղ—վղ
 կօնէ, ամա էլ իմ շանգերեմէն օջով չի կանա

գնա . . . Ահ, հիմի մէկն ու մէկը վուր ասում ին՝
 թէ փէիքարն, ասում է, գարշելի անասուն է, ի՞նչն է,
 մէ ձիդ իմ հարցնում. շան պէս մարթիք է կտրտում,
 թէ գիլի պէս ու ասլընի պէս մարթիք է կուլ տալի.
 ի՞նչով է նա փիս. ինչ Աստուծ շուք է տլի, էն
 շուքով է ապրում . . . Ախար գաղանի պէս ակուէք
 չունէ վուր կծելով իր կերակուրը ճարէ, թռչունքի
 պէս թիւիր չունէ վուր իր թռչելով ապրի. բաս
 ի՞նչ անէ խիղճը, վուր օթախի քնջնիքումը արբա-
 բուղէք չը սարքէ ու ճանջիրն էնգով չը բռնէ . . .
 Հիմի չէք ուղի՞ վուր վուտնետով ման գայ ու էնէնց
 իր կերակուրը ճարէ. գանա չիմ գիղի, էն սհաթին
 կու թողնիք, հըրա . . . (Աստուծ հոգի է) Աուրթ,
 շատ վուր փէքր իմ անում, է, էս աշխարքը դիփ
 մէկամէկու ուտելու է ստիղծած: Երէխայ վուխտս
 լտում էի՝ թէ ժանգամա թօփի, թօփման գէլի, գէլմա
 թխա, թխամ վէնախի շէճամա: Էստունք՝ ես հէնց
 գիղէի դիփ տուտուց մարդկերանց ասած բանիր է,
 ամա հիմի վուր լաւ հէսաբ իմ անում, զուրթ վուր
 դիփ մէկամէկու ուտում ին. մէ թռչունք մէկին է
 ուտում, մէ անասուն մէկէլին, մարթու աճկը խօմ
 զարթնի խուղը ինչը կու կշտացնէ. ինչ բարաթ բա-
 բաթ անասուն ասիս, թռչունք ասիս, միր փուրն է
 գէվէր գնում. էն կինքեմէն վուր չըլինք վախնում, է,
 մէկամէկու էլ կուտինք: Ամա միթամ չինք ուտում,
 այ. էս աշխարքումը ովոր ումն ախտում է, նա է
 զօջաղը. ախտին ու ուտիլը մէկ է էլի . . . Ամա միր
 հիրթն էլ գալիս է, խուղն է անուշ անում միգ,
 գառնում ինք խուղ. «հուղ էիր, ասում է, 'և հուղ

X

դարցի, » կօտէ: (Աստուծ հոգի է:) Է՛հ, փուչ
 աշխարք . . . Ամա ի՞նչն վրայ միտս էկաւ էստունք . . .
 հա, փէիքրի վրայ. չէ՛, փէիքրի վրայ կի չէ, իմ
 արարմունքի վրայ: Հիմի միթամ՝ ես խափիփայ իմ,
 ումն ինչ գէթ իմ անում, ախպէր. թուղ ինձ օջով
 չը խափէ, 'ես էլ օջովու չիմ խափի . . . Հիմի էսէնց
 վուր չը ժաժ գամ, դուք իք ուղում իմ ախշրկան.
 գանա չիմ գիղի, աւտաս դունիրս կտարտիք: (Մոյ՛
 ժամայրոյց էսնէլով:) Ձեր սհաթի վիցն է. ինչ ուշ է
 մթնանում, ախպէր . . . Յօրէս Իսային ու փեսացուս
 պիտի գան. հէստի հանգն ընթունիմ, վուր է աճկիրն
 արբանդվա անիմ իմ պարուն փեսացուին. Ձեր հալա
 մօհբաթ կօնիմ . . . Է՛հ . . . իժում հէստի բաներու
 վրայ կու խօսիմ հիղը, վուր սուրփ համարէ ինձ.
 իժում . . . իժում էլ ինչ, դուս կու բերիմ իմ կար-
 տինկա Մարքրիտին ու տեսնիմ թէ էս քու պարուն
 Գէվուրք Մասիսեանցը ի՞նչ կօտէ: Ի՞նչ պիտի ա-
 սի . . . (Ուտելու վէր է բաշտ:) կու ամանչի ու
 նշանը կու տալ տամ էլի: Ամա վայ թէ էն մէկի
 հանգը գղակը վիկալնէ ու ասէ՛ մնաք բարով: Վուչնց
 կանայ, 'ես էն մարդն իմ. Աստուծ է վկայ էստի
 էւէտ գլուխը կէս կօնիմ: Իմ խափիլը հիշտ բան չը
 գիղենաք, հըրա. ինձ Դարասիմ Եակուլիչ Զամբախով
 կօսին:

Իստուծ է գնում ալ դանից:

[Faint, illegible text at the bottom of the page, likely bleed-through from the reverse side.]

ՏԵՍԻԼ Դ

Մ Ա Ր Գ Ր Ի Տ, Ֆեւան . Տառն է չափ դասին , երեսը գե-
ղեցիպարած և Նապասխային նմանեցրած . որտեղից փեշերը
այնքան երկար է , որ խոնգարում է Տառն : Նապասխային է
և մի քանի ժամանակ լուսնու Տառն :

Սիրտս հենց զիղիմ քամվում է . . . Եսէնց շտա-
պով բան չիմ տեսի , էս հանգի ախչկայ նշնիլ էլ չիմ
ինձացի . . . Աստուծն լաւ տղայ է , ամա խիլքս չէ
կտրում . լաւը վուր ըլի , առանց տնդղել ախչիկ
գուղէ օքմի՞ն : Հալբաթ փուղն խաթիր է ուզում
ինձ . վայ իմ միխկը , փուղերս կու խժուէ ու իժում
քօծի պէս վէր կու գցէ ինձ : Ամա կո՞ւլի ինձ տնդղե-
լու է դայի ու ինձմէն թաքցնում ին : Ետ է , մի-
թամ փողոցի ապրանք իմ , միթամ չիթ է առնում .
հաւնի՞ ուղէ , չը հաւնի՞ , դուս գնայ : (Տեղից վէր է
լինում :) Ախ , Աստուծ , ինչ էիր հոքում , ինձ էլ
ուրիշներու պէս սիրուն էիր ստիղծի . թող սիրտս
քար էր էլի , լաւն ու վաղը մէկ էր էլի ինձ համա
աշխարհումն ու էրեսս սիրուն . զինջ կու ապրէի ,
աւատացած կուլէի վուր իմ մարթու սիրեկան իմ :
(Գնում է դէպի հայելին և մեջը նայում :) Էս իստակ իմ
նման չիմ . . . (Հայելիից հեռանում է և այնպէս նայում
մեջը :) Երանի դիւի էսէնց ըլիմ , էլ իմ մարթու սիր-
տը չի հոփնայ ինձմէն : Ամա ովոր վուր է էն տղէն
հալբաթ մէնակ փուղն համա չէ ուզում ինձ , թէ չէ
էսէնց ո՞ւր ին սիրունացնում ինձ նրա աճկումը . . .
Ախ , Աստուծ , թաք նա ինձ սիրէ , խօս՞ դիղիս դիւի

Քու կամքի կատարող իմ էլի , ու յօրէսի զէնը իմ
գլուխը չարի փուխ կօնիմ բարերարութենի համա . . .
(Նայում է ժամացոյցին :) Սհաթի վիցն է , յօրէս պիտի
գայ ասում ին . ինչու նրա գալը իմն ինձ կու հաս-
նի . . . Ախ , Աստուծ , էրանի ինձ չէիր ստիղծի ,
էրանի ախկըտի վուրթի էի էլի ու մէ ախկտի մօդ
բախտավուր էի էլի . ո՞վ դիղէ ինչ պիտի գայ գլխիս :
Թաշխնակով աչերը սրբում է և նստելով դի-
ւանի վրայ լուսնու լայ է լինում :

ՏԵՍԻԼ Ե

Մ Ա Ր Գ Ր Ի Տ, Ն Ա Տ Ա Լ Ի Ս

Ն Ա Տ Ա Լ Ի Ս , Տառն է չափ դասին , չեռան լայ լեւ հարոյ :
Հրան , Սարքրիա ջան , բաթինկէքդ բերին . . .
Քա , ի՞նչ իս անում , լաց իս ըլում . խօ էրէսիտ
դիղը վէր դու քայ :

Մ Ա Ր Գ Ր Ի Տ

Նա էլ էտ իմ վայ տալի իմ գլուխը , Նատալիա
ջան :

Առնում է Նապասխայի կարոյը :

Ն Ա Տ Ա Լ Ի Ս

Է՛հ , տուտուցացիլ իս , ինչ է . դուն հէնց դիղիս
մէնակ դո՞ւն իս լաց ըլում . ինձ էլ վուր նշնում էին ,
լերթ ու լիղիս զիվիր էկաւ լացեմէն :

Մ Ա Ր Գ Ր Ի Տ , հոգոյ հանելով :

Քու լացը իմ լացի մօդ ծիծաղ կուլէր , Նատալիա
ջան : (Լուսնու բոյ է անում կարոյը և հանելով մեջը սար-

ստեղծել էր այն հրոսկներով հռչակները, զարհարած վեր է
լուսնոստ արեղեյ :) Էս ի՞նչ է, քան. էս դարձ կրքնդնիր
կուլի՞. վուտիս վրայ վո՞ւնց կանգնիմ, Աբէլը *) խօսմ
չիմ :

ՆԱՏԱԼԻԱ

Ի՞նչ գիդիմ, գէթաղվա, քու մամէն է կարիւ
տվի . . . (Կօշիկները ասանո՞ւ է Մարգրեթի չեւոյն և
ասանչին :) Էս ի՞նչ ուցնաուր իմքնիր է, քան : (Մար-
գրեթի :) Ինչոր վուր է, էստունք է, Մարքրիտ ջան .
չարա չը կայ, պիտի եօլա տանիս : Բանէ՛, հաքի, էլ
մի ուշանա :

Կօշիկները ասուիս է Մարգրեթին :

ՄԱՐԳՐԻՏ, Վերարարած :

Հիմի իմ իմանում էս դերիի էրգէնութիւնը : Էտէնց
պիտի, մօղա է, կօսէ . . . Խիղճ տղայ, ինչ հանգն
ին ուզում խափի : (Տնորդելով կօշիկները :) Մեռնի սրա
կարօղի արիւր :

Կօշիկները Կէն է գոտ :)

ՆԱՏԱԼԻԱ

Վո՞ւյ, քոռանամ Էս, էտ ի՞նչ արիր, քան. մամէտ
վուր իմանայ, ի՞նչ ջուղաբ կու տաս :

*) Աբէլը Թեֆլիզի հասարակութեանը ծանօթ մի ճարպիկ
անձն էր, որ հանդիսաւոր տօներին Երեք — չորս սափհնաչափ
ձողերի վրայ կանգնած, իր ձեռնածուլիւններով զուարճացնում
էր ժողովրդին և զարմանալի դիւրութեամբ ման էր գալի այն
ձողերով :

ՄԱՐԳՐԻՏ, չեւոյն ճակատին ասուելով :

Ա՛խ :

Լսանալին :

ՆԱՏԱԼԻԱ

Քան, լաւ է, մէ չուստ հաքի, է :

Իայցեալ շտանալին :

ՄԱՐԳՐԻՏ, վեր է ասանո՞ւ կօշիկները, յետոյ գնալով :

Ա՛խ Աստու՛ճ, սպանէ ինձ ու պրծի :

Իտրս է գնում ջախ դասից :

ՏԵՍԻԼ Զ

ՆԱՏԱԼԻԱ, Բնակ :

Խիղճ արչիկ, միխկս գալիս է . . . Էն բաթինկէքն
էլ ինչ մօթխրա է, քան . . . Էն հանգի կրքնդնիր էլ
չէի տեսի իմ օրումը . . . Հիմի վուր մօղա գայ . յայ
թէ բոյի կու բռնին մէ բաշ զիփունքը . . . Տէր Աս-
տու՛ճ, իմ դուշմնին էլ չը տաս զիղճ արչիկ (Հայելի
ձեջ գնում է երկար ժամանակ :) Ինչ զրուստ է շանց
տալի էս հալիկէն :

Մարտնոյում է նայել հայելիի ձեջ :

ՏԵՍԻԼ Է

ՆԱՏԱԼԻԱ, ՄԱՐԳՐԻՏ

ՄԱՐԳՐԻՏ, մտնում է ջախ դասից Բարջը հասուելով
Երնէկ քիզ, Նատալիա :

ՆԱՏԱԼԻԱ

Քն, գրուստ իմ բոյի իս, Մարքրիտ ջան. ումը չիս դուր դա էտէնց :

ՄԱՐԳՐԻՏ

Է՛հ, Նատալիա ջան, մէ իմ սրտումն էլ դէվէր մտիկ տու. մահս էրնէկ իմ տալն, Աստուծ գիղենայ : Մամիմէն վախենում իմ, թէ չէ ուզում իմ ասի՝ վուր Ես մարթ չիմ ուզում. թող կսանանցը տայ ինձ :

Նստում է հո-չեպիսի Վրայ :

ՆԱՏԱԼԻԱ

Գժվել իս, Մարքրիտ, թէ ի՛նչ է էլն քիղ :

ՄԱՐԳՐԻՏ

Իսկի էլ չիմ գժվի. էն տղէն միխիս գալիս է . . . Երանի կանենամ, թաքուն իմաց կոնիմ վուր վունց երեսիս աւտայ, վունց բոյուս, թէ էնչասին էլ գուգէ ինձ ու կու տեսնիս. ամա վունց ասիմ Ես նրան էս բանը, ամու թու գեղինը կու մանիմ :

ՆԱՏԱԼԻԱ, Նստելով Բայլախանի Վրայ :

Վոյ իմ աճկին, գանա պիտի խօսիս էլ հիղը. քար դուրձ անելու կու դառնաս խօմ : Նրիք ամիս նշնած էի, մէ ջեր իմ ձէնը չէ իմացի Բայլին, քու արիւր :

ՄԱՐԳՐԻՏ

Գիղիմ, Նատալիա ջան, ու մամէն էլ սաստից վուր ձէն ծպտուն չը հանիս էս գիշեր, կուէ. ամա էն տղէն մէ օր խօ կու իմանայ իմ ափալը, խօ կու տեսնէ վուր երեսս էլ սուս է էլն ու բոյիս էլ. էնչասին իստակ աճկեմէն կու զցէ ինձ :

ՆԱՏԱԼԻԱ

